



6



13



16



22

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### tax ՊԱՇՏՈՆԱԿԱՆ 4

- 4 **Հարկային ուղի. հաստատական քայլերով՝ դեպի զարգացում**  
ԼՂՀ հարկային համակարգն այսօր ևս մեկ քայլով է մոտեցել հարկատուին
- 5 **ԼՂՀ վարչապետ Ա.Յարությունյան.**  
«Հարկատու-հարկային մարմին հարաբերությունները պետք է կառուցվեն գործընկերային հարթությունում»
- 6 **«Մեզ հաջողվելու է ստեղծել հարկերի հավաքագրման առավելագույն աճ ապահովող համակարգ»,- վստահ է ԼՂՀ ԿԱ հարկային պետական ծառայության պետ՝ Արտակ Բալայանը**

### tax ԼՈՒՐԵՐ 12

- 12 **Երկխոսության նոր միջոցներով՝ «Խուսափենք հաճախակի կրկնվող սխալներից».**  
հրապարակվել է հարկատուի օգնական ձեռնարկը
- 12 **Հարկային վիճակագրությունը՝ «Հարկային համառոտագրում»**
- 13 **«Հարկային համակարգում ստեղծեք ձեր կենսագրությունը»,-**  
համակարգի մրցույթում հաղթած դիմորդներին կոչ է արել ԼՂՀ ԿԱ ՀՊԾ պետ Ա.Բալայանը
- 14 **Հրատապ երկխոսություն. հարցնում եք դուք, պարզաբանում ենք մենք**  
Հարկատուի ոչ մի հարց անպատասխան չթողնել. այս սկզբունքով է առաջնորդվում Արցախի հարկայինը

### tax ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ 16

- 16 **Հարկային իրավախախտումների վիճակագրություն**
- 17 **2010 թվականի 5 ամիսները հարկային պետական ծառայությունն ամփոփել է գերակատարումներով**

### tax ՕՐԵՆՔ 10

- 20 **Օրենսդրական բարեփոխումներ.**  
Պարտաճանաչ հարկատուն խրախուսվում է, կարգազանցը՝ պատժվում.  
հարկային օրենսդրության մեջ մի շարք փոփոխություններ են կատարվել

### tax ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 24

- 24 **Տնտեսվարողների մոտ կատարված ստուգումները պետբյուջեին բերել են շուրջ 217.5մլն դրամ**



38



42



46



52

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- 26 **ԼՂՀ ԿԱ ՀՊԾ պետի տեղակալ Արթուր Հարությունյան.**  
«Արդեն մոտենում ենք այն ժամանակներին, երբ մեր երկրի հարկատուն այլևս չի մտածելու հարկերից խուսափելու մասին»

### tax ՌԵՊՈՐՏԱԺ

28

- 28 «Երբեմնի արդյունաբերական հսկա Մարտակերտը վերականգնում է դիրքերը՝ դառնալով գրավիչ բիզնեսի համար»  
Հարցազրույց Մարտակերտի հարկային տեսչության պետ՝ Վեսմիր Գրիգորյանի հետ

### tax top

32

- 32 **Հարկատու ON-LINE.** «Մինչ շատ պետություններ քննարկում են, Ղարաբաղում գործի են անցել»  
Հարցազրույց ԼՂՀ ԿԱ ՀՊԾ համակարգչային տեխնոլոգիաների ներդրման և սպասարկման բաժնի պետ՝ Միեր Ջհանգիրյանի հետ

### tax ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐ

34

- 34 **Արցախի խոշոր հարկատուները**  
2009-ին ԼՂՀ պետբյուջեի մուտքերի ավելի քան 10մլրդ դրամը վճարել են 100 խոշոր հարկատուները  
Առաջատարի դիրքերը հետևողականորեն պահպանում է «Բեյզ Մեթըլս»-ը

### tax ԲԻԶՆԵՍ

38

- 38 «Բեյզ Մեթըլս». Արցախի տնտեսության և «հիմնական մետաղի» հսկան. գլխավոր հարկատու «Բեյզ Մեթըլս»-ը նաև բարեգործ է  
Հարցազրույց «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ գլխավոր տնօրեն՝ Արթուր Սկրտունյանի հետ
- 42 «Արցախբանկ». բարձունքները միասին նվաճելու արվեստը  
Ներկայացնում է «Արցախբանկ» ՓԲԸ վարչության նախագահ՝ Կամո Ներսիսյանը
- 46 Զբոսաշրջությունը՝ Արցախի տնտեսության գերակա ուղղություն. ոլորտի հարկային պատմությունը տարեցտարի հարստանում է  
Պատմական Արցախում բացահայտումներն անվերջ են...

### tax ԱՇԽԱՐՀ

52

- 52 **Հարկային պատմություն**  
Աշխարհի ամենաանհեթեթ հարկերը

# www.tax.nk.am



ԼՂՀ ԿԱ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

ԹԻՎ 1 | 2010 | ԱՊՐԻԼ-ՅՈՒՆԻՍ

Գլխավոր խմբագիր՝  
Նելլի Մանուչարյան

Հեղինակներ՝  
Շաքե Ղազարյան  
Արմինե Բաղդասարյան

Արտ խումբ՝  
Գևորգ Գաբրիելյան  
Նելլի Բարսեղյան  
Նաիրա Պետրոսյան

Լուսանկարիչներ՝  
Ավետիս Ղազանջյան  
Նորայր Թադևոսյան

Գովազդ և մարկետինգ՝  
Հեռ.՝ 94 86 20

Հրատարակության 1-ին տարի  
Ծավալը՝ 56 էջ  
Տպաքանակը՝ 2000

Տրված է տպագրության  
25.06.10

Հեռ.՝ 94-86-20  
Էլ. փոստ՝ info@taxservice.nk.am

Մեջբերումներ անելիս հղումը  
«Հարկատու» ամսագրին  
պարտադիր է:

Ամսագրի հղվածների մասնակի կամ  
ամբողջական հեռուստառադիոընթերցումն  
առանց «Հարկատու» ամսագրին  
վկայակոչելու արգելվում է:

Ամսագիրը տպագրվում է «Տիգրան Մեծ»  
հրատարակչության տպարանում:



ԼՂՀ-ում ինքնուրույն գործող հարկային մարմին ձևավորվել է 1998թ.-ի հունիսի 23-ին՝ ԼՂՀ Նախագահի հրամանագրով: Դրան հաջորդել է ԼՂՀ կառավարության որոշումը, որով հաստատվել է հարկային համակարգի կանոնադրությունը, կենտրոնական աշխատակազմի և համակարգի կառուցվածքը:

Հարկային մարմին-հարկ վճարող հարաբերությունները սկզբունքորեն նոր հարթություն են տեղափոխվել «Հարկային ծառայության մասին» ԼՂՀ օրենքի ընդունմամբ: Այն էապես փոխել է հարկային ծառայության աշխատանքների կազմակերպման սկզբունքները, ընդլայնել պարտականություններն ու իրավունքները, որոնք էլ, բնականաբար, հարկային մարմնի կանոնադրությունը փոփոխելու պահանջ են առաջադրել: Արդյունքում կանոնադրության մեջ ամրագրվել են էական մի շարք դրույթներ:

*Այսուհետ Լեռնային Ղարաբաղի՝ օրեցօր նոր նվաճումներ արձանագրող հարկային համակարգը, բարեփոխումների ուղին անցնելու է նոր գործընկերոջ՝ «Հարկատու» ամսագրի հետ: Բայց այս պարբերականը նախ ձեռք գործընկերն է, հարգելի հարկատուներ, ձեր խորհրդատուն, առաջին օգնականն ու ներկայացուցիչը հարկային համակարգում: Այսպիսով Հարկային պետական ծառայությունը ձեզ համագործակցության ձեռք է մեկնում և առաջարկում միասին քննարկել առաջացող խնդիրները՝ հանուն Արցախի տնտեսության: *



## «ՀԱՐԿԱՏՈՒ-ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԵՏՔ Ե ԿԱՌՈՒՅՎԵՆ ԳՈՐԾՆԵԿԵՐԱՅԻՆ ՀԱՐԹՈՒԹՅՈՒՆՈՒՄ»

Տնտեսության կայունացման, առաջընթացի ապահովման, տարաբնույթ խնդիրների լուծման գործում իր կարևոր դերակատարությունն ունի երկրի հարկային համակարգը: Դա, բնականաբար, ենթադրում է հարկային այնպիսի քաղաքականության մշակում և իրականացում, որը կնպաստի ձեռնարկատիրական ակտիվության բարձրացմանը, ներդրումային գործընթացի աշխուժացմանը, ազատ մրցակցության հաստատմանը և, վերջին հաշվով, տնտեսական աճի կայուն տեմպերի ապահովմանը:

Տնտեսական գործունեության համար հարկային բարենպաստ դաշտի ստեղծման, հարկային կարգապահության, պատասխանատվության և վերահսկողության հետ կապված խնդիրների լուծումը, ըստ էության, երկրում արդյունավետ հարկային համակարգի կառուցման հիմնական նախադրյալներն են:

Այդ նպատակով վերջին տարիներին կառավարության և, մասնավորապես, Հարկային պետական ծառայության կողմից իրականացվում են հարկային վարչարարության հետևողական բարեփոխումներ, մասնավորապես, փաստաթղթաշրջանառության կանոնակարգում, փոքր բիզնեսի համար հաշվետվական մեխանիզմների բարելավում և պարզեցում, հարկ վճարողների սպասարկման մակարդակի բարձրացում, իրազեկվածության առավել բարձր մակարդակի ապահովում և այլն, որոնց դրական արդյունքներն

այսօր արդեն շոշափելի են: Դրանք իրենց արտացոլումն են գտել նաև համապատասխան ցուցանիշներում:

Հարկման մեխանիզմների արդյունավետ կիրառման առումով կարևոր նշանակություն ունի հասարակության գնահատականը: Հարկատու-հարկային մարմին հարաբերությունները պետք է լինեն ոչ թե հարկերից խուսափող-պատժող հարաբերություններ, այլ կառուցվեն գործընկերային հարթությունում, հարկային մարմինը հարկ վճարողին ծառայություն մատուցելով վերահսկի և օժանդակի հարկերի ժամանակին և պատշաճ չափով վճարմանը:

«Հարկատու» պարբերականն այս առումով ևս մեկ հնարավորություն է՝ հասարակությանը տեղյակ պահելու հարկային ոլորտում կատարվող ցանկացած տեղաշարժի՝ հարկային մարմնի աշխատանքները դարձնելով առավել թափանցիկ և հրապարակային:

Վստահ եմ, որ պարբերականն իր օգտակար և կառուցողական տեսակետներով հաստատուն և անքակտելի կամուրջ կծառայի պետության՝ ի դեմս հարկային մարմնի և հարկ վճարողների միջև ու խթան կհանդիսանա նաև ապագա ծրագրերի համար:

Պարբերականին մաղթում եմ կայուն ընթացք և ընթերցողների լայն շրջանակ:

ԼՂՀ ՎԱՐՉԱՊԵՏ՝ ԱՐԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## 2009

թվականը ԼՂՀ հարկային ծառայությունն ամփոփել է գերակատարումներով. պետբյուջե մուտքագրված հարկերը, տուրքերը և պարտադիր սոցիալական ապահովության վճարները հասել են շուրջ 19.5 մլրդ դրամի: Ընդհանուր առմամբ պլանային ցուցանիշը գերակատարվել է 2.4%-ով կամ 460 մլն դրամով: Իսկ նախորդ տարվա նկատմամբ հարկային եկամուտները, տուրքերը և պարտադիր սոցիալական ապահովության վճարներն աճել են 11.6%-ով կամ շուրջ 2 մլրդ դրամով: Ընդ որում, աճ է արձանագրվել հիմնականում բոլոր եկամտատեսակների գծով: Հարկ վճարողներին սպասարկող բոլոր ստորաբաժանումները ևս կատարել են պլանային առաջադրանքները:

«ՄԵՉ ՀԱՋՈՂԿԵԼՈՒ Է ՍՏԵՂԾԵԼ  
ՀԱՐԿԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ  
ԱՃ ԱՊԱՀՈՎՈՂ ՀԱՄԱԿԱՐԳ»

Վստահ է ԼՂՀ ՀՊԾ պետ Արտակ Բալայանը



# ԼՂՅ-ն ԱՅՆ ԵԶԱԿԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ Է, ՈՐԻՆ ՃԳՆԱԺԱՄԸ ՇՐՋԱՆՅԵԼ Է

**-Պարոն Բալայան, ԼՂՅ հարկահավաքների հաջողվել է ճգնաժամի պայմաններում տարին ամփոփել գերակատարումներով, ինչը նաև 2010թ.-ին է շարունակվում: Ի՞նչ մեխանիզմների կամ միջոցառումների արդյունքում է դա ձեզ հաջողվել:**

-Որպեսզի եկամուտների հավաքագրման այսպիսի գոհացուցիչ արդյունքներ ունենանք, մենք մի շարք էական քայլեր ենք ձեռնարկել դեռևս 2008թ.-ից: Ակնկալվող արդյունքն ունենալու նպատակով մենք ձեռնամուխ եղանք պահանջվող միջոցառումների իրականացմանն ու նաև ընդլայնմանը: Մենք մեր առջև գերնպատակ դրեցինք՝ ստեղծել հարկերի հավաքագրման առավելագույն աճ ապահովող համակարգ: Նախ կազմեցինք և մշակեցինք պահանջվող միջոցառումների ցանկ, շեշտը դրեցինք հարկային օրենսդրության կատարելագործման ու պարզեցման վրա, անհրաժեշտություն կար շտկել նաև օրենսդրական բացերը: Մեր առաջնային քայլերից մեկը սովորաբար տնտեսության կրճատումն ու բացահայտումն էր, վերահսկողական աշխատանքների որակի բարձրացումը, օրենսդրության դրույթների միատեսակ կիրառումը: Այդ ուղղությամբ մենք մի շարք լայնածավալ միջոցառումներ նախաձեռնեցինք:

Որպեսզի սովորաբար շրջանառության դեմ պայքարը լինի համակարգված, մենք համակարգում և՛ կառուցվածքային, և՛ կադրային մի շարք փոփոխություններ կատարեցինք: Այդ փոփոխությունները պահանջեցին նաև նոր նշանակումներ ղեկավար անձնակազմում, կատարվեցին ռոտացիաներ, ստեղծվեց վերահսկողական աշխատանքները համակարգող հանձնաժողով, հարկային վարչարարության բարեփոխումների խորհուրդ, ինչը ևս շատ կարևոր էր:

Մեծածավալ աշխատանքներ ենք իրականացրել հարկատու-հարկային մարմին շփումը նոր դաշտ տեղափոխելու ուղղությամբ, որտեղ հարկ վճարողն իրեն հարմարավետ կզգա և որպես գործընկեր կընկալվի: Բացի այդ, մեր կարևոր խնդիրներից էր հարկային մարմնի արդիականացումը: Արցախի հարկային ծառայությունը ոչնչով չպետք է զիջի զարգացած երկրների համանման կառույցներին և շարունակաբար համապատասխանեցվի ժամանակակից պահանջներին. սա է մեր թիվ 1 սկզբունքը, որի արդյունքը տարեցտարի տեսանելի է դառնում:

**-Թվարկված ուղղություններից առաջնային է, բնականաբար, նաև օրենսդրական դաշտը, դրա կատարելագործումը: Այս առումով ի՞նչ փոփոխություններ են կատարվել:**

-2009-ին օրենսդրական դաշտում իրականացված բարեփոխումները կարևոր նախապայման հանդիսացան մեր աշխատանքների որակն ապահովելու հարցում: Դրանք միտված էին տնտեսությունում փաստաթղթաշրջանառության կանոնակարգմանը, փոքր ձեռնարկատիրության համար փաստաթղթաշրջանառության բեռի կրճատմանը, ինչպես նաև՝ ճգնաժամի բացասական ազդեցությունները մեղմելուն:

Նախաձեռնված օրենսդրական փոփոխություններից կցանկանալի ընդգծել մի քանիսը. «Ակցիզային հարկի մասին» օրենքում 2009-ին կատարված փոփոխությունը, որով ենթաակցիզային ապրանք արտադրողներին հնարավորություն ընձեռնվեց մինչև 2011թ.-ը պարտավորությունների առկայությունից անկախ ստանալ ակցիզային դրոշմակիշեր: Այս փոփոխությունն ուղղված էր ոլորտում ճգնաժամային երևույթների հակազդմանը, ինչը պայմանավորեց արտադրական ցիկլի անխափան կազմա-

կերպումը՝ իր հերթին դրականորեն անդրադառնալով ֆիզիկական անձանցից խաղողի մթերման գործընթացի լիարժեք իրականացման վրա:

Հաջորդը փոքր ձեռնարկատիրական գործունեության համար փաստաթղթաշրջանառության բեռի թեթևացումն ու դրա հետ կապված՝ բիզնեսի վարչական ծախսերի կրճատումն է: Այս փոփոխության արդյունքում այժմ հարկ վճա-

**Արցախի հարկային ծառայությունը ոչնչով չպետք է զիջի զարգացած երկրների համանման կառույցներին**

**Առանց «Բեյզ Մեթըլս» ընկերության մուտքերի՝ 2008թ.-ին պետական բյուջե են մուտքագրվել 10մլրդ 240մլն դրամ հարկային եկամուտներ, ինչը նախորդ տարվա նույն ցուցանիշը գերազանցել է 55.8%-ով կամ 3մլրդ 668մլն դրամով: Համեմատության համար նշենք, որ 2007-ին հարկային եկամուտները 2006թ.-ի նույն ցուցանիշը գերազանցել են 820մլն դրամով կամ 14.2%-ով:**

րողների 35%-ը կամ շուրջ 1200 անհատ ձեռնարկատեր հաշվարկ-հաշվետվությունները և այլ տեղեկությունները ներկայացնում են կիսամյակային պարբերականությամբ՝ ամսական կամ եռամսյակային պարբերականության փոխարեն: Փոփոխությունը դրական անդրադարձ է ունեցել նաև սպասարկման մակարդակի բարձրացման և արդյունավետ ընթացիկ վերահսկողություն իրականացնելու տեսանկյունից՝ հնարավորություն տալով հարկային մարմիններին կենտրոնա-

Նալ առավել մեծ իրացման շրջանառություն ունեցող հարկ վճարողների վրա: Մյուս փոփոխությունն էլ վերաբերում է սոցիալական որոշ խմբերի ուսանողներին. խոսքը նրանց ուսման վարձերի գեղջման կամ ներման մասով բարձրագույն ուսումնական հաստատություններին 2009-2010թթ.-ին առաջացած շահութահարկի և ավտոճանապարհային մասհանումների վճարումից ազատման մասին է:


Օրենսդրական նախաձեռնություններից մեկն էլ առնչվում է տնտեսությունում փաստաթղթաշրջանառության կանոնակարգմանը: Մասնավորապես, առևտրի ոլորտում գործող սուբյեկտներին հնարավորություն ընձեռվեց օրինականացնել ԼՂՀ տարածք ներմուծվող՝ առանց փաստաթղթերի հիմնավորման կատարված ձեռքբերումները՝ ազատելով վերջիններիս փաստաթղթերի ձեռքբերման հետ կապված քաջքուկներից և ապահովելով իրատեսական հարկային պարտավորությունների հաշվարկման հնարավորություն:

Կարևորում են նաև 2009թ.-ի հունվարի 1-ից մինչև 2013-ը ԼՂՀ տարածքում բնակարանային շինարարության ոլորտի ավելացված արժեքի հարկից ազատումը, ինչն իր հերթին նպաստեց ոլորտում ներդրումների իրականացմանն ու զարգացմանը:

**- Գնորդական աշխատանքների կազմակերպման առումով ԼՂՀ հարկային մարմինները և որդեգրեցին ստուգումների նվազման քաղաքականությունը, էական տեղ հատկացվեց փաստաթղթավորման խնդրին, և, առհասարակ, ավելի ակտիվացավ ստվերի դեմ պայքարը: Կարող ենք այսօր դրական տեղաշարժի մասին խոսել:**

-Միանշանակ: Անցած տարի մեր կողմից իրականացվել է 825 ստուգում, այսինքն՝ 2008թ. համեմատ ստուգումները նվազել են շուրջ 36%-ով կամ՝ 470 ստու-

գումով: Ստուգումների նվազումը ես առաջին հերթին պայմանավորում եմ 2008-ին մեր ծառայության տարեկան գործունեության ամփոփման ժամանակ ԼՂՀ Նախագահի կողմից տրված հանձնարարականով: Իհարկե, մեծ դեր ունեցավ նաև վերահսկողության գործընթացների կազմակերպման առումով



**Պաշտոնավարման առաջին իսկ օրվանից իմ առանձնակի ուշադրության կենտրոնում է համակարգում բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի ստեղծումը:**

որդեգրած նոր, առավել արդյունավետ գործելաոճը՝ ընդհանուր համատարած ստուգումներից ռիսկային չափանիշների վրա հիմնված ստուգումներին աստիճանական անցումը:

Ստուգումների թվաքանակի կրճատմանը զուգահեռ գործարկեցինք կամերալ ուսումնասիրությունների իրականացման համակարգը, որը հարկ վճարողներին հնարավորություն է տալիս խուսափել հետագայում ստուգումներով կիրառվելիք տուգանքներից:

Հաշվետու տարում, այո, մեր առանձնակի ուշադրության կենտրոնում է եղել փաստաթղթավորման խնդիրը. արդյունքում մեզ հաջողվեց զգալիորեն

նվազեցնել ապրանքների ստվերային շրջանառությունը:

Ինչպես արդեն նշեցի, դեռևս 2008-ի սկզբից հարկային մարմնի կողմից ստվերային տնտեսության բացահայտմանն ու կրճատմանն ուղղված լայնածավալ միջոցառումներ են նախաձեռնվել, որոնք սկսվել են առաջին հերթին առևտրի ոլորտից՝ հաշվի առնելով ոլորտի ստվերայինության բարձր մակարդակը:

Հարկ վճարողների հետ պարբերաբար կազմակերպվեցին նախազուշական, բացատրական, քարոզչական, նաև՝ անհատական հանդիպումներ, որից հետո արդեն իսկ նախաձեռնեցինք համատարած ստուգումներ՝ ուղղված հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ճշտությանը. առաջին անգամ կիրարկվեց նաև հսկիչ-դրամարկղային մեքենաների խախտումներ թույլ տված տնտեսավարող սուբյեկտների գործունեության կասեցման համակարգը: Այսպես, 2008թ.-ին կատարվել են հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման 344 ստուգումներ, որոնց արդյունքում 12 սուբյեկտների գործունեություն կասեցվել է

5-ական օրով, 3 սուբյեկտներինը՝ 10-ական օրով:

Համատարած ստուգումներ կազմակերպեցինք նաև ձեռնարկատիրական գործունեության առարկաների գրանցման ճշտության մասով: Ակտիվացրեցինք ապրանքանյութական արժեքների ներմուծման գործընթացի կատմամբ հսկողական աշխատանքները. արդյունքում 2008թ.-ին միայն առևտրի գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների կողմից ապրանքանյութական արժեքների ներմուծման ծավալը կազմել էր 27մլրդ 326մլն դրամ, ինչը 13մլրդ 857մլն դրամով կամ 97%-ով գերազանցում էր 2007թ.-ի ցուցանիշը:



Անցած տարի այդ ցուցանիշը համապատասխանաբար կազմել է 33 մլրդ 116 մլն դրամ՝ 5 մլրդ 790 մլն դրամի չափով կամ՝ 21%-ով աճ արձանագրելով 2008-ի համեմատ:

2008-ին առևտրի հարկի մասով պետությունը է մուտքագրվել 1 մլրդ 97 մլն դրամ՝ կազմելով 2007թ.-ի ցուցանիշի 218.5%-ը կամ 595 մլն դրամով ավելի: 2009-ին մուտքագրվել է 1 մլրդ 222 մլն դրամ՝ կազմելով 2008թ. ցուցանիշի 111.4%-ը կամ 125 մլն դրամով ավելի: Համապատասխանաբար իրացման շրջանառությունները կազմել են 2008թ.՝ 41 մլրդ 200 մլն դրամ՝ 2007-ի 20 մլրդ 380 մլն դրամի դիմաց, իսկ 2009-ին՝ 46 մլրդ 570 մլն դրամ:

2009թ.-ին շարունակելով հսկողական աշխատանքները առևտրի ոլորտում՝ շեշտը դրվել է նաև տնտեսավարող սուբյեկտների կողմից աշխատավարձերի ֆոնդերի իրական մեծությունների արտացոլման խնդրին: Մասնավորապես, լուրջ ուշադրություն ենք դարձրել ֆիզիկական անձանց ստացած եկամուտների իրական մեծությունների բացահայտման աշխատանքներին, իրականացրել ենք և՛ բացատրական, և՛ կանխարգելիչ միջոցառումներ, որոնց արդյունքում պարտադիր սոցվճարների մուտքերը 2008-ի համեմատ աճել են 27%-ով, եկամտահարկի մուտքերը՝ մոտ 20%-ով:

2009-ին նախորդ տարիների համեմատ հարկային հանցագործությունները նվազել են, բարձրացել է դրանց բացահայտմանն ուղղված միջոցառումների արդյունավետությունը: Դրանում իր դերակատարումն է ունեցել 2009թ.-ի հունվարի 1-ից հարկային համակարգում գործող քննչական ստորաբաժանումը:

Հսկողական գործիքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով այս տարի նախատեսում ենք ռիսկային չափանիշների վրա հիմնված ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգի մշակում, մեր մշտական ուշադրության կենտրոնում կլինի գործարքների փաստաթղթավորման պահանջը, այդ թվում՝ հսկիչ-դրամարկ-

դային մեքենաների շահագործման կառուցների պահպանումը, առևտրի ոլորտում չընդգրկված տնտեսավարող սուբյեկտների կողմից ֆիզիկական անձանց հետ կանխիկ ձևով իրականացվող գործարքների իրական շրջանառությունների վերհանումը, որտեղ, ըստ մեր գնահատականների, առկա է մեծ ստվեր:

**-Որքանով է այսօր Ղարաբաղի հարկ վճարողն ընկալվում որպես հարկային մարմինների գործընկեր: Փոխվստահության դաշտի բարելավմանն ուղղված ի՞նչ միջոցառումներ են իրականացվում:**



**2009 թվականից կիրառում ենք ատեստավորման և մրցույթների կազմակերպման էլեկտրոնային համակարգ:**

-Հարկ վճարողի իրազեկվածությունն ապահովելու, օրինապահ և կիրթ հարկ վճարողի ինստիտուտի կայացմանը նպաստելու խնդիրը եղել է մնում է հարկային մարմնի առաջնակարգ խնդիրներից մեկը: Հարկ վճարող-հարկային մարմնի համագործակցության դաշտի բարելավման նպատակով 2009թ.-ին ընտրել և գործարկել ենք երկխոսության Նոր միջոցներ: Այս առումով կարևորում են հատկապես մեր՝ շուրջ մեկ տարի առաջ ստեղծված կայքէջը, որը հնարավորություն է տալիս ծանոթանալ հարկային նորություններին, ստանալ հարկային դաշտի վերաբերյալ տեղեկություններ, ուղղել հուզող հարցերն ու արագ ստանալ դրանց պատասխանները:

Մեզ համար կարևոր է ու նաև հաճելի, երբ գործ ենք ունենում իրազեկված

հարկատուի հետ: այդ նպատակով մեր կողմից տարվում են ուսուցողական, պարզաբանման աշխատանքներ: Հաշվետու տարում կենտրոնական ապարատի մասնագետների կողմից հարկ վճարողների հետ Ստեփանակերտում և շրջաններում անցկացվել են 17 սեմինար-խորհրդակցություններ, տեղերում կազմակերպվել են հազարից ավելի ընդունելություններ, արագ և լիարժեք պատասխաններ տրվել հարկ վճարողների գրավոր հարցումներին: Հրապարակվել է հարկային օրենսդրության ամփոփ փաթեթը: Մեր մշտական ուշադրության կենտրոնում է եղել տեսչությունների պետերի կողմից քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների ընդունելությունների կազմակերպումը: Մեր ծառայության «թեժ գիծ»-ը սպասարկել է շուրջ 424 հեռախոսազանգ: Խիստ հսկողության տակ է պահվել հարկային ծառայողի կողմից հարկ վճարողի նկատմամբ պատշաճ վերաբերմունքի պահպանումը:

Այս տարի մենք ավելի ենք ընդլայնել հարկ վճարողների տեղեկացվածությունն ապահովող միջոցառումների շարքը, մշակում ենք փոքր բիզնեսի համար հարկերի հաշվարկման ձեռնարկ, արդեն իսկ հրապարակվել են «Առավել հաճախակի հանդիպող սխալների» տեղեկագիրքը և «Հարկային համառոտագիր»-ը: Իսկ

մեր այս պարբերականի՝ «Հարկատու» ամսագրի հրապարակումը, հարկատուին ևս մեկ քայլով կմոտեցի հարկային մարմնին:

**-Պրն Բալայան, մատնանշված բոլոր քայլերի հիմքում, թերևս, հարկային ծառայության արդիականացումն է: Ի՞նչ նորամուծությունների արդյունքում եք ակնկալում կատարելագործել մատուցվող ծառայությունների որակը:**

-Մեր աշխատանքները պետք է կազմակերպենք ժամանակակից չափանիշներին համահունչ. դա մեր գերնպատակներից է: Այս համատեքստում, բնականաբար, մեծ տեղ ենք հատկացրել տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրմանն ու զարգացմանը: Արդյունքում այսօր համակարգում գործում է

Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ, որն ապահովում է ստորաբաժանումների միջև ուղիղ և արագ կապ: Ներդրվել են նաև բոլոր հաշվարկ-հաշվետվությունների մուտքագրման, դիտման ծրագրերը, ինչը թույլ է տալիս ստորաբաժանումներին իրենց իրավասությունների շրջանակում օպերատիվ տեղեկություններ ստանալ հարկ վճարողի այս կամ այն ցուցանիշի վերաբերյալ: Նշեմ նաև, որ այդ ամենը

կերպման Էլեկտրոնային համակարգ: Անցած տարի կազմակերպել ենք 4 մրցույթ՝ հարկային ծառայության թափուր պաշտոնների համար, որին մասնակցել է 113 քաղաքացի: Մրցույթների արդյունքներով աշխատանքի է ընդունվել 17 քաղաքացի: Անցկացվել է 28 ծառայողների ատեստավորում, որոնցից 13-ը համապատասխանել են զբաղեցրած պաշտոնին, իսկ 15-ը ենթակա են վերապատրաստման: Ցավոք, մրցույթի

գիտական պատրաստվածության մակարդակը բարձրացնելու նպատակով: Կադրերի որակավորման աստիճանի բարձրացման համար մեր մասնագետները պարբերաբար ընդգրկվում են միջազգային դասընթացներին:

Որպես կառույցի ղեկավար՝ պաշտոնավարման առաջին իսկ օրվանից իմ առանձնակի ուշադրության կենտրոնում է համակարգում բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի ստեղծումը. դա ևս արդյունավետ աշխատանքի կարևորագույն հանգամանքներից է: Առաջնային խնդիր եմ դիտել նաև ստորաբաժանումների ղեկավարների միջև փոխգործակցության ամրապնդումը՝ հիմնված մեկ միասնական խնդիր իրագործելու և նպատակ հետապնդելու սկզբունքի վրա: Այսօր կարող ենք փաստել, որ այդ առումով արձանագրվել են դրական արդյունքներ, այդ է վկայում համակարգում տարբեր նպատակներով ստեղծված հանձնաժողովների գործունեությունը:

### **-Ձեր դիտարկմամբ, ի՞նչ մակարդակի վրա է համագործակցությունը ՀՀ ՊԵԿ-ի հետ:**

- Հայաստանի և Արցախի հարկային մարմինների միջև համագործակցության ամրապնդման տեսանկյունից հատկապես առանձնացել է 2009 թվականը: Պետական եկամուտների կոմիտեի և ԼՂՀ հարկային պետական ծառայության միջև հաստատվեց 2009-2011թթ. համատեղ միջոցառումների իրականացման ծրագիրը, որով ամրագրվեց երկու հանրապետությունների հարկային մարմինների միջև կապը և նոր, կայուն հիմքերի վրա դրվեց համագործակցությունը: Ծրագրի շրջանակներում այս տարի արդեն իրականացրել ենք կադրերի որակավորման, տեղեկությունների փոխանակման, օրենսդրական և ենթաօրենսդրական փոփոխությունների նախագծերի համատեղ քննարկման աշխատանքներ, կազմակերպել ենք փոխադարձ այցեր: Մեր համագործակցությունը արտահայտվում է նաև Պետական եկամուտների կոմիտեի կողմից պարբերաբար ցուցաբերվող նյութական օժանդակությամբ: 

**Այսօր կարող եմ փաստել, որ դիմորդների պատրաստվածության մակարդակը գնալով նկատելիորեն բարձրանում է, ինչի մասին վկայում են այս տարվա առաջին 5 ամիսների տվյալները. անցկացված երկու մրցույթների 58 դիմորդներից 13-ը հաղթող են ճանաչվել:**



մեզ հաջողվել է իրականացնել սեփական միջոցներով՝ կառույցի կադրային ներուժով:

Անցումն Էլեկտրոնային կառավարման համակարգին ենթադրում է միջոցների և ժամանակի տնտեսում, ինչը նկատելիորեն կբարձրացնի հարկային ծառայողների աշխատանքի արդյունավետությունը, հնարավորություն կընձեռի իրականացնել առավել որակյալ վերլուծություններ և ստուգումներ, ինչը, վերջին հաշվով, կապահովի հարկային եկամուտների հավաքագրման աճ:

### **-Այսինքն՝ կադրերի ընտրության հարցում ևս մոտեցումը լուրջ է:**

-Անկասկած, առանց գրագետ կադրերի ցանկացած բարեփոխում, միանշանակ, տապալվելու է: Այնպես որ, աշխատանքները բնութագրող ցուցանիշների ապահովման հարցում կադրերի ճիշտ ընտրությունն ու տեղաբաշխումը կարևոր նախապայմաններից մեկն է: Այս առումով կարևոր նշանակություն եմ տալիս մրցույթների և ատեստավորումների ճիշտ և արդար կազմակերպմանը. դա ապահովելու նպատակով 2009 թվականից կիրառում ենք ատեստավորման և մրցույթների կազմա-

արդյունքները ցույց են տալիս դիմորդների մասնագիտական թերի պատրաստվածություն, ինչի հետևանքով կադրային բազայի համալրումը դժվարանում է: Այս խնդրի լուծման համար կիրառել ենք նախնական հարցազրույցով պայմանագրային հիմունքներով աշխատանքի ներգրավումը: Այս առումով համագործակցել ենք նաև Արցախի պետական համալսարանի հետ՝ Տնտեսագիտական ֆակուլտետի ավարտական կուրսի լավագույն ուսանողներին և շրջանավարտներին հնարավորություն տալով փորձաշրջանով աշխատել համակարգում՝ հետագայում նրանց պատրաստելով մրցույթների: Եվ այսօր կարող եմ փաստել, որ դիմորդների պատրաստվածության մակարդակը գնալով նկատելիորեն բարձրանում է, ինչի մասին վկայում են այս տարվա առաջին 5 ամիսների տվյալները. անցկացված երկու մրցույթներին մասնակցած 58 դիմորդներից 13-ը հաղթող են ճանաչվել: Դեռ անելիքներ ունենք կադրային ներուժի ապահովման խնդրում, հատկապես՝ ղեկավար կադրերի շրջանակում: Առաջիկայում նախատեսում ենք ստեղծել հարկային ծառայության ուսումնական կենտրոն՝ կադրերի մասնա-

# Artsakh Fruit



«Արցախ Ֆրուիթ» ՓԲԸ

ԼՂՀ ք. Ստեփանակերտ, փ. Մելիքազան 25  
հեռ.՝ (+37447) 972299, ֆաքս՝ (+37447) 972099  
arfruit@yahoo.com, www.artsakhfruit.com

# ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ՝ ԽՈՒՄԱՓԵՆՔ ԶԱՃԱԽԱԿԻ ԿՐԿՆՎՈՂ ՍԽԱԼՆԵՐԻՑ

Համապատասխան ձեռնարկն արդեն հրապարակված է

**Ե**վ այսպես, «Խուսափենք հաճախակի կրկնվող սխալներից» հարկատուն արդեն նոր օգնական ունի: Հարկային ծառայությունն անընդհատ նոր ուղիներ է մշակում՝ հարկ վճարողի իրազեկվածությունն ապահովելու, օրինապահ և կիրթ հարկատուի ինստիտուտը կայացնելու նպատակով: Հերթական քայլը ընդգրկուն ձեռնարկի հրապարակումն է, որն արդեն հարկատուների ձեռքի տակ է: Այնպես որ, հարկային մարմինների հետ գործ ունենալուց առաջ մանրամասն ուսումնասիրեք անհրաժեշտ կետերը. դրանք ձեզ կօգնեն զերծ մնալ թյուրիմացություններից և սխալներից: Վստահ եղեք,

որ այդպիսով դուք հարկային ցուցակում կընդգրկվեք որպես տեղեկացված, հետևաբար նաև՝ կարգապահ հարկ վճարող: Այլ առավելություն էլ կա՝ ձեռնարկը ձեզ կհուշի, թե այս կամ այն հարցում ինչ իրավունքներ ունեք դուք և որոնք են ձեր պարտականությունները: Իսկ եթե հարկային ոլորտին առնչվող որևէ հարց ծագի, ապա դրա պատասխանը ևս հաստատ կգտնեք ձեռնարկում. այն հրապարակող մասնագետները դա էլ են հաշվի առել՝ ներառելով 80-ից ավելի հարց ու պատասխան:

«Խուսափենք հաճախակի կրկնվող սխալներից» ձեռնարկը մշակվել և հրապարակվել է՝ հարկ վճարողների կողմից բարձրացված հարցերի, ինչպես նաև վերահսկողության արդյունքում բացահայտված խախտումների հիման վրա: Իսկ դա էլ նշանակում է, որ երկխոսության այս եղանակի միջոցով եսպես կկանխվեն ու կբացառվեն հարկային դաշտում արձանագրվող խախտումներն ու թերությունները: Այլ կերպ ասած՝ այս ձեռնարկը նաև հարկային ոլորտի յուրահատուկ հայելի է. հարց ու պատասխանի տեսքով պարզաբանումների այս տարբերակն ավելի շոշափելի և պարզորոշ կերպով ներկայացնում է համակարգում առավել հաճախ հանդիպող, պարզաբանման ենթակա ու հրատապ հարցերի շրջանակը: 

միջ բարձրացված հարցերի, ինչպես նաև վերահսկողության արդյունքում բացահայտված խախտումների հիման վրա: Իսկ դա էլ նշանակում է, որ երկխոսության այս եղանակի միջոցով եսպես կկանխվեն ու կբացառվեն հարկային դաշտում արձանագրվող խախտումներն ու թերությունները: Այլ կերպ ասած՝ այս ձեռնարկը նաև հարկային ոլորտի յուրահատուկ հայելի է. հարց ու պատասխանի տեսքով պարզաբանումների այս տարբերակն ավելի շոշափելի և պարզորոշ կերպով ներկայացնում է համակարգում առավել հաճախ հանդիպող, պարզաբանման ենթակա ու հրատապ հարցերի շրջանակը: 


# ՀԱՐԿԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ «ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒՄ»

**ԼՂՅ** հարկային մարմինների կողմից հրապարակվել է նաև «Հարկային համառոտագիր» ձեռնարկը:

Այս գրքույկում էլ համառոտ ներկայացվում է ԼՂՅ-ում գործող հարկային դաշտն ու հարկային վիճակագրությունը՝ 2006-2009թթ. կտրվածքով: Գրքույկում ներառվել են նաև հարկային օրենսդրությանն առնչվող տեղեկատվական այլ նյութեր, որոնք ևս կօգնեն հարկային դաշտին հեշտությամբ տեղեկանալու գործընթացին: «Հարկային համառոտագիր»-ը՝ որպես մեթոդական ուղեցույց, կծառայի ձեռներեցների, ֆինանսահարկային ոլորտի աշխատողների, բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների և հարկային դաշտի հետ առնչվող յուրաքանչյուր քաղաքացու համար: 

վական այլ նյութեր, որոնք ևս կօգնեն հարկային դաշտին հեշտությամբ տեղեկանալու գործընթացին: «Հարկային համառոտագիր»-ը՝ որպես մեթոդական ուղեցույց, կծառայի ձեռներեցների, ֆինանսահարկային ոլորտի աշխատողների, բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների և հարկային դաշտի հետ առնչվող յուրաքանչյուր քաղաքացու համար: 

*«Հարկային համառոտագիր»-ը՝ որպես մեթոդական ուղեցույց, կծառայի ձեռներեցների, ֆինանսահարկային ոլորտի աշխատողների, բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների և հարկային դաշտի հետ առնչվող յուրաքանչյուր քաղաքացու համար:*





# Ա.ԲԱԼԱՅԱՆ. «ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՍՏԵՂԾԵՔ ԶԵՐ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ»

**Հ**արկային համակարգը պետք է համարված լինի բարձր պատրաստվածություն ունեցող, որակյալ կադրերով. սա է հարկային ծառայության ղեկավարության գլխավոր մոտեցումը: Այս առումով մեծ ուշադրություն է դարձվում մրցույթների և ատեստավորումների կազմակերպմանը: Մրցույթների արդար և թափանցիկ անցկացման նպատակով այս տարվա ապրիլին առաջին անգամ գործարկվել է մրցույթի անցկացման համակարգչային տարբերակը:

Ապրիլի վերջին կայացած մրցույթներում հաղթող ճանաչված դիմորդների հետ հանդիպել է Հարկային ծառայության

յան պետ Արտակ Բալայանը: «Ձեզ համար նոր փուլ է սկսվում՝ անցնում եք բավականին պատասխանատու աշխատանքի: Իսկ դա նշանակում է, որ մեծ նվիրվածություն պետք է ցուցաբերեք և

որ համակարգում ստեղծված են անհրաժեշտ պայմանները՝ աշխատակիցների մասնագիտական գիտելիքներին համապատասխան ծառայողական առաջխաղացումն ապահովելու համար: «Մշտա-

**Համակարգում ստեղծված են անհրաժեշտ պայմանները՝ աշխատակիցների մասնագիտական գիտելիքներին համապատասխան ծառայողական առաջխաղացումն ապահովելու համար:**

քաջատեղյակ լինեք ձեր գործառույթներին: Առանց դրա պարզապես կոփեք տեղում», - հիշեցրել է համակարգի ղեկավարը: Ա.Բալայանը նաև ընդգծել է,

պես ձգտեք կատարելագործել ձեր մասնագիտական գիտելիքները: Հարկային համակարգում ստեղծեք ձեր կենսագրությունը:

## 1 ՏԱՐԻ Է, ԻՆՉ ԳՈՐԾՈՒՄ Է ՀԱՐԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՅՔԷԶԸ

# www.tax.nk.am

**2009** թվականի հուլիս ամսից գործում է հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայք՝ www.tax.nk.am հասցեով, որը հնարավորություն է ընձեռում ծանոթանալ հարկային նորություններին, ստանալ հարկային դաշտի վերաբերյալ տեղեկություններ, ուղղել հուզող հարցերն ու արագ ստանալ դրանց պատասխանները: Կայքէջն ապահովում է նաև համակարգի աշխատանքների թափանցիկությունը:

**Գործունեության շուրջ մեկ տարվա ընթացքում www.tax.nk.am-ն ունեցել է 32 հազարից ավելի այցելու**



**?** *-Վարձակալական պայմանագրի լուծման և փաստացի դադարեցման դեպքում վարձակալի կողմից վարձակալված հիմնական միջոցի վրա կատարված կապիտալ ծախսերի չամորտիզացված մնացորդը ինչպե՞ս է հաշվի առնվում շահութահարկի հաշվարկման առումով:*

-«Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ վարձակալական պայմանագրի լուծման և փաստացի դադարեցման դեպքում չամորտիզացված մնացորդը չի նվազեցվում վարձակալի համախառն եկամտից, ինչը հանգեցնում է հարկային և հաշվապահական հաշվառման տարբերության առաջացմանը:

**?** *-ՊՈԱԿ-ներին անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով հատկացված հիմնական միջոցների վրա կատարված ծախսերը ինչպե՞ս են հաշվի առնվում:*

-Հիմնադրի կողմից անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ՊՈԱԿ-ին ամրակցված հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումների մասով համախառն եկամտից նվազեցումներ չեն կատարվում, իսկ դրանց վրա կատարված ծախսերը (ընթացիկ, կապիտալ) հաշվի են առնվում վարձակալի համար վարձակալված հիմնական միջոցների վրա կատարված ծախսերի (ընթացիկ, կապիտալ) համար սահմանված կարգով:

-«Եկամտահարկի մասին» ԼՂՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ հարկվող եկամտի 5 տոկոսից ոչ ավելի չափով արհեստակցական կազմակերպություններին մասհանվող գումարները եկամտահարկի հաշվարկման ժամանակ ենթակա են նվազեցման համախառն եկամտից: Ընդ որում, նվազեցման կիրառման նպատակով արհեստակցական կազմակերպության անդամության դիմումի առկայությունը պարտադիր է:

**?** *-ԼՂՀ տարածքում գործուղման ժամանակ աշխատողը կատարել է օրապահիկի գծով ծախսեր՝ օրական 10,0 հազ. դրամ գումարով, որոնք հիմնավորված են փաստաթղթերով: Առաջանու՞մ է, արդյոք, եկամտահարկ, եթե նրան փոխհատուցվում է կատարված ծախսի ամբողջ գումարը:*

-Եթե աշխատողը ԼՂՀ քաղաքացի է, ապա նրա համախառն եկամուտը՝ «Եկամտահարկի մասին» ԼՂՀ օրենքի 9-րդ հոդվածի «բ» ենթակետին համապատասխան, նվազեցվում է ԼՂՀ տարածքում գործուղման յուրաքանչյուր օրվա համար օրապահիկի 2,0 հազ. դրամը կազմող գումարի չափով (փաստաթղթերով հիմնավորված լինելու հանգամանքից անկախ), իսկ նշված նորման գերազանցող փոխհատուցման վճարները գումարվում են նրա աշխատավարձին և հարկվում եկամտահարկով՝ ընդհանուր սահմանված կարգով:  
Եթե աշխատողը օտարերկրյա քաղաքացի է կամ քաղաքացիություն չունեցող անձ, ապա գործուղման հետ կապված



# ՀՐԱՏԱՊ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ

**?** *-Հարկային գործակալի կողմից աշխատողին վճարվող եկամուտներից արհեստակցական կազմակերպություններին մասհանվող գումարները ներառվո՞ւմ են եկամտահարկի հաշվարկման օբյեկտում:*

փոխհատուցման բոլոր վճարները գումարվում են նրա աշխատավարձին և հարկվում են եկամտահարկով՝ «Եկամտահարկի մասին» ԼՂՀ օրենքի 22-րդ հոդվածով սահմանված կարգով:



**-Չարկ վճարողը ո՞ր դեպքերում է ներկայացնում ամսական ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ-ի) հաշվարկ:**

-«Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 32-րդ հոդվածի համաձայն այն անձանց համար, որոնց ապրանքների մատակարարումից, ծառայությունների մատուցումից, այդ թվում անհատույց կամ մասնակի հատուցմամբ, հասույթը նախորդող օրացուցային տարում գերազանցել է 60մլն դրամը, ԱԱՀ-ի վճարման հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր ամիսը: Ընդ որում, 60մլն դրամ շեմը որոշելիս, հաշվի է առնվում թվարկված բոլոր գործարքների ընդհանուր հասույթը, մասնավորապես՝ հարկի 20%, 0% դրույքաչափով հարկվող, ԱԱՀ-ից ազատված, առևտրի հարկով կամ հաստատագրված վճարներով հարկվող գործարքներից ստացված հասույթը: Նշված հասույթի մեջ չի ներառվում ԱԱՀ-ի գումարը:



**-Ի՞նչ կարգ է նախատեսված մարդատար ավտոմեքենաների ձեռք բերման ժամանակ վճարված ավելացված արժեքի հարկի գումարների հաշվանցման համար:**

-«Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ մարդատար ավտոմեքենաների ձեռքբերման համար սահմանված է առանձնահատուկ կարգ: Որոշ դեպքերում մարդատար ավտոմեքենաների ձեռքբերման ժամանակ վճարված ավելացված արժեքի հարկի գումարներն ընդհանրապես ենթակա չեն հաշվանցման: Ուստի օրենքի տվյալ նորմի ճիշտ կիրառման առումով անհրաժեշտ է նկատի ունենալ, որ եթե ավելացված արժեքի հարկ վճարող համարվող անձը ոչ իրացման նպատակով (օրինակ՝ կազմակերպության կարիքների համար) ներմուծել կամ ձեռք է բերել մարդատար ավտոմեքենա, որի համար սահմանված կարգով վճարել է ավելացված արժեքի հարկ, ապա տվյալ դեպքում ավտոմեքենայի համար վճարված ավելացված արժեքի հարկի գումարը ենթակա չէ հաշվանցման և պետք է ավելացվի ավտոմեքենայի ձեռք բերման արժեքին:

Չետագայում, այդ ավտոմեքենան իրացնելիս, հարկ վճարող անձի մոտ առաջանում է ավելացված արժեքի հարկի պարտավորություն, որից կարելի է հաշվանցել իրացման պահին ավտոմեքենայի մնացորդային արժեքի նկատմամբ հաշվարկային եղանակով հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարը:



**-Արտադրական և այլ առևտրային նպատակներով (բացառությամբ՝ իրացման համար) ձեռք բերված բենզինի և (կամ) դիզելային վառելիքի հետագայում իրացման դեպքում**

**կատարվո՞ւմ է նախկինում հաշվանցված ԱԱՀ-ի գումարների վերահաշվարկ:**

-Արտադրական և այլ առևտրային նպատակներով (բացառությամբ՝ իրացման համար) ձեռք բերված բենզինի և (կամ) դիզելային վառելիքի հետագայում իրացման դեպքում դրանց ձեռք բերման հաշվարկային փաստաթղթում նշված գումարի (բենզինի և (կամ) դիզելային վառելիքի ձեռքբերման արժեքի) 16.67 տոկոսի չափով նախկինում հաշվանցված գումարը ենթակա է վերահաշվարկման և միացման բենզինի և (կամ) դիզելային վառելիքի ձեռքբերման արժեքին այն հաշվետու ժամանակաշրջանում, որում իրացվել են այդ ապրանքատեսակները:



**-Սոցիալական վճարներ հաշվարկվո՞ւմ են, արդյոք, քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում կատարվող աշխատանքների, մատուցվող ծառայությունների դիմաց ստացվող եկամուտներից:**

-ԼՂՀ քաղաքացիական օրենսդրությանը համապատասխան՝ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից կատարվող աշխատանքներից և մատուցվող ծառայություններից ստացվող եկամուտները դիտվում են որպես սոցիալական վճարների հաշվարկման օբյեկտ, բացառությամբ քաղաքացիաիրավական պայմանագրերի հիման վրա գիտական և ստեղծագործական աշխատանքների, փոխառությունների և վարձակալության դիմաց ստացված եկամուտների: Ընդ որում, գործատուներն այդ պայմանագրերի շրջանակներում կատարվող աշխատանքների, մատուցվող ծառայությունների դիմաց հաշվարկում են սոցիալական վճար՝ 15% դրույքաչափով, իսկ 3%-ի չափով սոցիալական վճարներ չեն կատարում:



**-Այն կազմակերպություններում, որտեղ ներդրված են հսկիչ-դրամարկղային մեքենաներ, ստացված կանխիկ դրամը ի՞նչ ժամկետներում է ենթակա մուտքագրման կազմակերպության դրամարկղ կամ բանկային հաշիվ:**

-Կազմակերպություններում, որտեղ ներդրված են հսկիչ-դրամարկղային մեքենաներ, դրանց միջոցով գրանցված տվյալների հիման վրա ստացված կանխիկ դրամը մուտքի օրդերով ըստ յուրաքանչյուր օրվա տվյալների մուտքագրվում է կազմակերպության դրամարկղ կամ կազմակերպության բանկային հաշիվ՝ կանխիկ դրամի ստացման օրվանից ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում: ☑

# 2009-10ԹԹ.-Ի ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ



## ԲՈՒԱԳԱՆՁՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

2010թ. առաջին եռամսյակի ընթացքում ներկայացված բռնագանձման 6 հայցերով (շուրջ 8.1մլն դրամ հայցագևով) դատարանների կողմից կայացվել է 3 վճիռ՝ 569.3 հազ. դրամ ընդհանուր հայցագևով, որոնք ամբողջությամբ բավարարվել են: Նշված ժամանակահատվածում բռնագանձվել է 3.7մլն դրամ:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում ներկայացվել է բռնագանձման 23 հայց՝ 136991.1 հազ. դրամ հայցագևով: Նույն ժամանակահատվածում դրանցով կայացվել է 1 վճիռ՝ 15.0 հազ. դրամ ընդհանուր հայցագևով, որն ամբողջությամբ բավարարվել է: Այդ ժամանակահատվածում բռնագանձվել է 11.4մլն դրամ:

**Ը**նթացիկ տարվա առաջին եռամսյակի ընթացքում ԼՂՀ ԿԱ ՀԳԾ օպերատիվ հետախուզության վարչության, իրավաբանական և քննչական բաժինների իրականացրած աշխատանքների արդյունքում պետական բյուջե է վերականգնվել ընդհանուր առմամբ 15.4մլն դրամ:

## ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ

2009թ.-ի առաջին եռամսյակում կայացվել էր վարչական տույժ նշանակելու մասին 285 որոշում՝ 3.9մլն դրամ ընդհանուր գումարով, որից փաստացի գանձվել է 3.6մլն դրամ, իսկ այս տարվա նույն ժամանակահատվածում՝ 336 որոշում՝ 4.3մլն դրամ ընդհանուր գումարով, որից փաստացի գանձվել է 3.7մլն դրամ:

## ԱՐԳԵԼԱԴՐՈՒՄ

ԼՂՀ կառավարության համապատասխան որոշման համաձայն, ընթացիկ տարվա առաջին եռամսյակի ընթացքում հարկ վճարողների գույքի վրա դրվել է 53 արգելադրում. նախորդ տարվա նույն ժամանակահատվածում հարկ վճարողների գույքի վրա դրվել էր 61 արգելադրում:

## ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Այս տարվա հունվար-մարտ ամիսներին քննչական բաժին վարույթ է ընդունվել երեք քրեական գործ: Մեկ քրեական գործով նախաքննությունն ավարտվել է և մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: Քրեական մյուս գործով էլ վարույթը կասեցվել է: Հաշվետու ժամանակաշրջանում նախաքննության ընթացքում վերականգնվել է 8մլն դրամից ավելի:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում քրեական գործերով վարույթներ չեն ընդունվել, մեկ քրեական գործով վարույթը կասեցվել է: **Բ**



# 20 10 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՄԱՅԻՍ ԱՄԻՍՆԵՐԸ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆ



## ԱՄՓՈՓԵԼ Է ԳԵՐԱԿԱՏԱՐՈՒՄՆԵՐՈՎ

**20 10** թ.-ը ԼՂՀ հարկային պետական ծառայությունը սկսել և շարունակում է գերակատարումներով: Արձանագրված ցուցանիշները խոսուն են ոչ միան տարեսկզբից, այլ նաև՝ հինգ ամսվա տվյալներով. հունվար-մայիս ամիսներին ԼՂՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները, տուրքերը և պարտադիր սոցիալական ապահովության վճարները կազմել են շուրջ

7.5մլրդ դրամ, ինչը պլանային ցուցանիշը՝ 7.05մլրդ դրամը, գերազանցել է 6.2 տոկոսով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը գերազանցել է 18 տոկոսով կամ՝ ավելի քան 1.1մլրդ դրամով:

Ընդ որում՝ հարկային եկամուտների և պետական տուրքի մասով պետական բյուջե է մուտքագրվել 5.3մլրդ դրամ՝ շուրջ 5մլրդ դրամ պլանային առաջադրանքի դիմաց կամ շուրջ 304մլն դրամով ավելի՝ պլանային ցուցանիշը գերա-

զանցելով 6.1 տոկոսով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 22.7 տոկոսով կամ շուրջ 982.5մլն դրամով:

Պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով հաշվետու ժամանակաշրջանում հավաքագրվել է շուրջ 2.2մլրդ դրամ՝ գերակատարելով պլանային առաջադրանքը շուրջ 133մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը՝ 161.5մլն դրամով կամ շուրջ 8 տոկոսով:

# ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Պետական բյուջեի՝ 2010 թվականի առաջին եռամսյակի եկամուտներ

## ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

ԼՂՀ պետական բյուջեի՝ 2010 թվականի 1-ին եռամսյակի հարկային եկամուտները կազմել են շուրջ 2856120.0 հազ. դրամ՝ 6.9%-ով ավել ծրագրային մուտքերից: 2009 թվականի 1-ին եռամսյակի համեմատ պետական բյուջեի հարկային եկամուտներն աճել են 649176.6 հազ. դրամով: Հարկային եկամուտների հաշվին է ապահովվել պետական բյուջեի եկամուտների 66.1 տոկոսը: Պետական բյուջեի հարկային եկամուտների գերակատարումը հիմնականում ապահովվել է շահութահարկի, եկամտահարկի, բնապահպանական և բնօգտագործման վճարների, ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման համար կատարվող մասհանումների, առևտրի հարկի հաշվին:

2010 թվականի 1-ին եռամսյակի կտրվածքով ավելացված արժեքի հարկի գծով պետական բյուջեի մուտքերը կազմել են 1471242.6 հազ. դրամ՝ ապահովելով հարկային եկամուտների 51.5%-ը և ընդհանուր բյուջետային եկամուտների 34.0%-ը, պլանավորված ցուցանիշը կատարվել է 100.7%-ով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ԱԱՀ-ի գծով ԼՂՀ պետական բյուջեի մուտքերն աճել են 381688.8 հազ. դրամի չափով, կամ 35%-ով: Աճը հիմնականում պայմանավորված է հանքարդյունաբերության արտադրանքի միջազգային գների աճի միտումով:


Պետական բյուջեի հարկային եկամուտների կազմում ԱԱՀ-ից հետո իր կշռով երկրորդ հարկատեսակը եկամտահարկն է: Հաշվետու ժամանակահատվածում ապահովվել են 382562.0 հազ. դրամի մուտքեր՝ կազմելով պետական բյուջեի հարկային եկամուտների 13.4%-ը և ընդհանուր եկամուտների 8.8%-ը, պլանավորված ցուցանիշը գերակատարվել է 31362.0 հազ. դրամով, կամ 8.9%-ով: 2009թ. 1-ին եռամսյակի համեմատ եկամտահարկի գծով պետական բյուջեի մուտքերն աճել են 14.0%-ով կամ 46977.1 հազ. դրամով:

Եկամտահարկի գծով պետական բյուջեի մուտքերի ավելացումը պայմանավորված է վերահսկողական աշխատանքների իրականացման և ստվերի

կրճատման արդյունքում որոշ ոլորտներում հայտարարագրվող միջին աշխատավարձերի բարձրացմամբ:

2010 թվականի 1-ին եռամսյակի շահութահարկի գծով պետական բյուջեի եկամուտները կազմել են 233685.5 հազ. դրամ՝ ապահովելով հարկային եկամուտների 8.2%-ը և ընդհանուր եկամուտների 5.4%-ը, պլանավորված ցուցանիշը գերակատարվել է 9.6%-ով, կամ ավել 20485.5 հազ. դրամով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ շահութահարկի մուտքերն ավելացել են 30816.7 հազ. դրամով կամ 15.2%-ով: 2009թ. 1-ին եռամսյակի համեմատ հիմնական աճը գրանցվել է տնտեսության մասնավոր հատվածում, հիմնականում ֆինանսավարկային ոլորտում:

Հարկային եկամուտներ





Պետական բյուջեի հարկային եկամուտների կազմում ակցիզային հարկի հաշվին ապահովվել են 32055.6 հազ. դրամի մուտքեր՝ կազմելով պետական բյուջեի հարկային եկամուտների 1.1%-ը, և ընդհանուր բյուջետային եկամուտների 0.7%-ը, պլանավորված ցուցանիշը գերակատարվել է 2055.6 հազ. դրամով, կամ 6.9%-ով:

Հաշվետու ժամանակաշրջանում պետական բյուջե մուտքագրված հաստատագրված վճարների գումարը կազմել է 114489.5 հազար դրամ, ապահովելով պետական բյուջեի հարկային եկամուտների 4.0%-ը, պլանավորված ցուցանիշը գերակատարվել է 4.0%-ով, կամ 4389.5 հազ. դրամով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ հաստատագրված վճարների գծով մուտքերն աճել են 6549.1 հազ. դրամով, կամ 6.1%-ով: Աճը պայմանավորված է հաստատագրված վճարներով հարկվող որոշ ոլորտների հարկման բազայի ընլայնմամբ, մասնավորապես՝ ԼՂՀ տարածք ներմուծվող բենզինի և դիզելային վառելիքի, հանրային սևնդի, բենզինի և դիզելային վառելիքի մանրածախ վաճառքի, ավտոտրանսպորտային միջոցների գազալցման, խանութների ու կրպակների միջոցով իրականացվող մանրածախ առևտրի և տրանսպորտային գործունեության իրականացմամբ:

2010 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտների 10.3%-ն ապահովվել է առևտրի հարկի հաշվին: Այս հարկատեսակի գծով մուտքերը կազմել են 293983.2 հազ. դրամ՝ 14.0%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը, հաշվետու ժամանակաշրջանի պլանավորված ցուցանիշը՝ 12.6%-ով, կամ 32983.2 հազ. դրամով:

Բնական պաշարների օգտագործման և շրջակա միջավայրի պահպանման վճարների գծով 2010 թվականի 1-ին եռամսյակի կտրվածքով պետական բյուջե է մուտքագրվել 129233.7 հազար դրամ, պլանավորված ցուցանիշը գերակատարվել է 45.2 տոկոսով: 2009թ. 1-ին եռամսյակի համեմատ վճարի գծով

պետական բյուջեի մուտքերն աճել են 56530.2 հազ. դրամի չափով, կամ 77.8%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է հանքարդյունաբերական արտադրանքի միջազգային շուկաներում գների աճով:

Ավտոճանապարհների շինարարության և նորոգման համար կատարվող մասհանումների մուտքերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են 109954.3 հազ. դրամ, նախատեսված ցուցանիշն ավել է 31834.3 հազ. դրամով:

**2010 թվականի առաջին եռամսյակի ընթացքում պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտների 10.3%-ն ապահովվել է առևտրի հարկի հաշվին: Այս հարկատեսակի գծով մուտքերը կազմել են 293983.2 հազ. դրամ՝ 14.0%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը:**

մով կամ 40.8%-ով: Նախորդ տարվա 1-ին եռամսյակի համեմատ մասհանումների գծով մուտքերն աճել են 78.8%-ով, կամ 48461.3 հազ. դրամով: Վճարների նման աճը հիմնականում պայմանավորված է հարկ վճարողների կողմից հայտարարագրվող իրացման ծավալների աճով, մասնավորապես՝ հանքարդյունահանման և տնտեսության այլ բնագավառներում:

Այլ հարկային եկամուտների գծով 2010 թվականի 1-ին եռամսյակի մուտքերը կազմել են 26034.8 հազ. դրամ, որը ծրագրավորված ցուցանիշը գերազանցել է 8034.8 հազ. դրամով, կամ 44.6%-ով: Նախորդ տարվա համեմատ այլ հարկային եկամուտների գծով մուտքերը նվազել են 27.0%-ով, կամ 9625.7 հազ. դրամի չափով: Նվազումը պայմանավորված է հարկային մարմինների կողմից հաշվետու ժամանակաշրջանում կանխարգելիչ վարչարարական քաղաքականության վարման հետ:

Ռոյալթիի գծով 2010 թվականի 1-ին եռամսյակի պետական բյուջեի եկամուտները կազմել են 55833.9 հազ. դրամ, ծրագրված ցուցանիշը կատարվել է 107.4%-ով կամ ավել 3833.9 հազ. դրամի չափով, ինչը կապված է հանքարդյունահանման ոլորտում շահութաբերության նորմայի աճի հետ:

Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների գծով ԼՂՀ պետական բյուջեի եկամուտները 2010 թվականի 1-ին եռամսյակում կազմել են 7044.9 հազ. դրամ, ծրագրված ցուցանիշը գերակատարվել է 0.6%-ով, կամ 44.9 հազ. դրամով:

### ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔ

Պետական տուրքի գծով 2010 թվականի 1-ին եռամսյակի բյուջեի մուտքերը կազմել են 66687.8 հազար դրամ՝ ապահովելով պետական բյուջեի եկամուտների 1.5%-ը: Պլանավորված ցուցանիշը պակաս է կատարվել 22312.2 հազ. դրամով, կամ 25.1%-ով: 2009թ. 1-ին եռամսյակի համեմատ պետական տուրքի գծով պետական բյուջեի մուտքերն աճել են 3.1%-ով կամ 2008.3 հազ. դրամով:

### ՊԱՐՏԱԴԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊՎՅՈՎՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐ

Պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով ԼՂՀ պետական բյուջեի 2010 թվականի 1-ին եռամսյակի մուտքերը կազմել են 1191008.2 հազ. դրամ (ներառյալ 2010 թվականի 1-ին եռամսյակի 100193.7 հազ. դրամի չափով կատարված ծախսերի գումարը), պլանավորված ցուցանիշը կատարվել է 108.2%-ով, կամ 90508.2 հազ. դրամով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ վճարի գծով մուտքերն աճել են 6.9%-ով կամ 76894.6 հազ. դրամով: Աճը հիմնականում կապված է անհատ ձեռնարկատերերի կողմից հայտարարագրվող պարտադիր սոցիալական ապահովության վճարներով հարկվող տարեկան եկամուտների աճով, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանում հարկ վճարողների կողմից հայտարարագրվող միջին աշխատավարձերի աճով:

**Հ**արկային վարչարարության պարզեցում, բարելավում, պարտաճանաչ հարկ վճարողների խրախուսում, կարգազանց հարկատուների նկատմամբ խիստ պատասխանատվության միջոցների սահմանում, առանձին օրենքներով նախատեսված դրույթների ներդաշնակեցում, օրենսդրական բացերի շտկում. սա են նախատեսում 2009 թվականին ԼՂՀ Ազգային ժողովի քննարկումներին ներկայացված մեկ տասնյակից ավելի օրինագծերը:

# ՊԱՐՏԱՃԱՆԱՉ ՀԱՐԿԱՏՈՒՆ ԽՐԱԽՈՒՄՎՈՒՄ Է, ԿԱՐԳԱԶԱՆՅԸ՝ ՊԱՏԺՎՈՒՄ.

ԼՂՀ մի շարք օրենքներ 2009-ին փոփոխվել են

## ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐԵԼԱՎՎՈՒՄ Է, ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐԻ ԾԱԽՍԵՐՆ ԷԼ՝ ԿՐՃԱՏՎՈՒՄ.

Նաև «Շահութահարկի մասին» օրենքի փոփոխության արդյունք է

**2009** թվականի հունվարի 1-ից փոփոխություն է կատարվել «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքում: Այն ենթադրում է հարկային վարչարարության բարելավում, հարկ

վճարողների ծախսերի կրճատում: Փոփոխված օրենքի համաձայն՝ հարկային մարմին ներկայացվող հաշվապահական (ֆինանսական) հաշվետվությունների ցանկը սահմանափակվել է

միայն հաշվապահական հաշվեկշռով և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությամբ:

## ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ 35 ՏՈԿՈՍԸ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՐԿԱՅԻՆ ԵՆ ՆԵՐԿԱՅԱՅՆՈՒՄ ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ

**Ի**սկ 2009թ.-ի հուլիսի 1-ից փոքր ձեռնարկատիրական գործունեության ոլորտում փաստաթղթաշրջանառության բեռի թեթևացման, բիզնեսի վարչական ծախսերի կրճատման նպատակով «Հարկերի մասին», «Եկամտահարկի մասին», «Ավելացված արժեքի հարկի մասին», «Առևտրի հարկի մասին», «Բենզինի և դիզելային վառելիքի համար հաստատագրված վճարների մասին», «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ԼՂՀ օրենքների փաթեթով մինչև 36մլն դրամ իրացման շրջանառություն ունեցող, վարձու աշխատանք չօգտագործող և լիցենզավորման ենթակա գործունեություն չիրականացնող անհատ ձեռնարկատերերի համար կրճատվել է հարկային մարմիններ

ներկայացվող հաշվարկ-հաշվետվությունների և այլ տեղեկությունների պարբերականությունը: Մասնավորապես, 2009թ. հուլիսի 1-ից հարկ վճարողների 35%-ը կամ շուրջ 1200 անհատ ձեռնարկատերեր (որոնց իրացման շրջանառության տեսակարար կշիռը կազմում է ընդհանուր իրացման շրջանառության շուրջ 1.5%-ը) հաշվարկ-հաշվետվությունները հարկային մարմին են ներկայացնում կիսամյակային պարբերա-

կանությամբ՝ ամսական կամ եռամսյակային պարբերականության փոխարեն:

Նշված փոփոխությունը դրական ազդեցություն ունեցավ նաև սպասարկման մակարդակի բարձրացման և արդյունա-

վետ վերահսկողություն իրականացնելու առումով՝ հնարավորություն տալով հարկային մարմիններին կենտրոնալ առավել մեծ իրացման շրջանառություն ունեցող հարկ վճարողների վրա:

**Հարկ վճարողների 35%-ը կամ շուրջ 1200 անհատ ձեռնարկատերեր (որոնց իրացման շրջանառության տեսակարար կշիռը կազմում է ընդհանուր իրացման շրջանառության շուրջ 1.5%-ը) հաշվարկ-հաշվետվությունները հարկային մարմին են ներկայացնում կիսամյակային պարբերականությամբ:**





# ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ` «Առևտրի հարկի մասին» և «Հաստատագրված վճարների մասին» օրենքով

**2009** -ի ընթացքում ընդունված օրենսդրական փոփոխությունների մյուս փաթեթը միտված է տնտեսությունում փաստաթղթաշրջանառության կանոնակարգմանը: Մասնավորապես, «Առևտրի հարկի մասին» և «Հաստատագրված վճարների մասին» օրենքներով խանութների, կրպակների, տաղավարների և այլ վաճառատեղերի միջոցով բացառապես առևտրային գործունեություն իրականացնող առևտրի հարկ և հաստատագրված վճար վճարողները **ԼՂՀ** տարածք

ներմուծվող` առանց փաստաթղթերի հիմնավորման կատարված ձեռքբերումների մասով ազատվում են «Եկամտահարկի մասին» օրենքով սահմանված հարկային գործակալի պարտականություններից և նրանց վրա չեն տարածվում պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին օրենքով նախատեսված ծախսերի հիմնավորման նկատմամբ ներկայացվող պահանջները, եթե դրանք սահմանված կարգով հաշվառվել են հսկիչ կետերում` լրացված են հաշվառման քարտե-

րը և ներմուծման ամփոփագրերը (ներմուծման հայտարարագրերը): Օրենքների գործողությամբ եապես բարձրացել է հարկային վարչարարության և հսկողական աշխատանքների արդյունավետության մակարդակը, հստակեցվել` փաստաթղթերով չհիմնավորված (միակողմանի գնման ակտերով ձևակերպված) փաստացի կատարված ծախսերի մասով իրատեսական հարկային պարտավորությունների հաշվարկման գործընթացը:



## ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՄԲ` ԲՈՒՅ-ԵՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ

**Տ** նտեսական ճգնաժամի բացասական հետևանքները հնարավորինս նվազագույնի հասցնելու նպատակով փոփոխություններ են կատարվել «Շահութահարկի մասին» և «Ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման համար կատարվող հատկացումների (մասհանումների) մասին» օրենքներում: Մասնավորապես, բարձրագույն ուսումնական հաստատությունները **2009-2011**թթ.

ազատվում են հաստատությունում սովորող` զոհված զինծառայողների այրիների ու երեխաների, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների, 1-ին, 2-րդ խմբերի ու մանկուց հաշմանդանների և արցախյան պատերազմի 1-ին խմբի հաշմանդանների երեխաների ուսման վարձերի զեղչման կամ ներման մասով առաջացած շահութահարկի և ավտոճանապարհային մասհանումների վճարումից: Նախքան փոփոխությունները, գործող կարգի համաձայն` բուհերը շահութահարկ և ավտոճանապարհային մասհանումներ էին վճարում նաև այդ ուսանողների ուսման վճարների զեղչման արդյունքում փաստացի չստացված եկամուտներից: Այդ պատճառով բուհերը գերադասում են խուսափել զեղչերից: Արդյունքում բավական դժվար կացության մեջ են հայտնվում նման զեղչերից օգտվող ուսանողները:

ազատվում են հաստատությունում սովորող` զոհված զինծառայողների այրիների ու երեխաների, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների, 1-ին, 2-րդ խմբերի ու մանկուց հաշմանդանների և արցախյան պատերազմի 1-ին խմբի հաշմանդանների երեխաների ուսման վարձերի զեղչման կամ ներման մասով առաջացած շահութահարկի և ավտոճանապարհային մասհանումների վճարումից: Նախքան փոփոխությունները, գործող կարգի համաձայն` բուհերը շահութահարկ և ավտոճանապարհային մասհանումներ էին վճարում նաև այդ ուսանողների ուսման վճարների զեղչման արդյունքում փաստացի չստացված եկամուտներից: Այդ պատճառով բուհերը գերադասում են խուսափել զեղչերից: Արդյունքում բավական դժվար կացության մեջ են հայտնվում նման զեղչերից օգտվող ուսանողները:




## ԽԱՂՈՂԸ ԼԻԱՐԺԵՔ ԿՄԹԵՐԿԻ. «ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» օրենքի փոփոխությունը դա թույլ է տալիս

**Փ** փոփոխություններ են կատարվել նաև «Ակցիզային հարկի մասին» օրենքում: Մինչ փոփոխությունները, «Ակցիզային հարկի մասին» **ԼՂՀ** օրենքի 7-րդ հոդվածի համաձայն, հարկային մարմինների կողմից ակցիզային դրոշմանիշեր չէին տրամադրվում, եթե դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ ակցիզային հարկի գծով գերավճարը քիչ էր պահանջվող դրոշմանիշերի համար վճարման ենթակա գումարից: Համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետևանքով տնտեսությունում ձևավորված վճարումների անկատարության պայմաններում` օրենքի նշված դրույթի

կիրառումը խաթարում էր արտադրության բնականոն կազմակերպումը` հանդիսանալով արտադրական ցիկլի ժամանակավոր ընդհատման պատճառ, որն իր հերթին արգելակում էր հարկատուի հետագա շրջանառության դիմաց հարկային պարտավորության արագ առաջանալու հնարավորությունը: Հետևաբար «Ակցիզային հարկի մասին» օրենքի այդ դրույթի գործողությունը կասեցվել է մինչև **2011**թ. հունվարի 1-ը: Այդ փոփոխությունը դրական անդրադարձավ ֆիզիկական անձանցից խաղողի մթերման գործընթացի լիարժեք իրականացման վրա:

Կարևորվում է նաև **2009**-ի հունվարի 1-ից մինչև **2013** թվականը **ԼՂՀ** տարածքում կառուցվող բազմաբնակարան (այդ թվում` բազմաֆունկցիոնալ) կամ ստորաբաժանված շենքի բնակարանների օտարման մասով ավելացված արժեքի հարկից ազատման արտոնության սահմանումը, ինչը նպաստում է ոլորտում ներդրումների իրականացմանն ու զարգացմանը:



# 1992թ.

Հանրապետությունում ստեղծված իրավիճակից ելնելով և նախքան համապատասխան օրենքների ընդունումը՝ որոշվել էր ԼՂՀ-ում առաջնորդվել դեռևս նախկինում ընդունված ԽՍՀՄ մի շարք օրենքներով և հրամանագրերով:



1992թ.

ԼՂՀ պետական պաշտպանության կոմիտեի որոշմամբ, մտցվեց ակցիզային հարկը. դրա համար բազա հանդիսացավ թողարկման գնով իրացվող ենթաակցիզային ապրանքների արժեքը՝ ներառյալ ակցիզային հարկը: Որպես արտոնություն, ակցիզային հարկից ազատվեցին նախկին ԽՍՀՄ երկրներից դուրս արտահանվող ենթաակցիզային ապրանքները:



1993թ.

Ընդունվել է «ԼՂՀ-ում ապրանքների /աշխատասքսսրի, ծառայությունների/ ներմուծման և արտահանման քվոտավորման և լիցենզավորման միասնական կարգ»-ը:

Մինչ այդ սահմանվել էր, որ ԼՂՀ-ից ապրանքների արտահանումը պետք է իրականացվի ՀՀ գործող գներով, ընդ որում՝ գնային տարբերությունը ենթակա էր պարտադիր գանձման:

Եական նշանակություն ուներ նաև «ԼՂՀ սահմաններից դուրս տարվող ավտոտրանսպորտային միջոցների մաքսային հարկի» ընդունումը: Այն սահմանվում էր արտահանվող ավտոտրանսպորտային միջոցների շուկայական գների նկատմամբ՝ դրանց թողարկման տարիների հաշվառմամբ:



1992թ.

Գործողության մեջ է մտել «Ձեռնարկությունների, միավորումների և կազմակերպությունների շահութահարկի մասին» որոշումը, իսկ ավելի ուշ՝ «ԼՂՀ քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց եկամտահարկի մասին» որոշումը:



1995թ.

ԼՂՀ կառավարության որոշմամբ ընդունվել է «ԼՂՀ-ում հողի հարկի ներդրման, նրա հաշվարկման և վճարման կարգը»: Դրանով սահմանվել է, որ գյուղատնտեսական գործունեության գծով տնտեսությունները վճարում են հողի հարկ և ազատվում եկամտահարկից. հարկի դրույքաչափը սահմանվել է ըստ հողատեսքերի:



# ՆՈՐ ՓՈՒԼ ԼՂՅ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ.

1998թ.-ին՝ «Հարկերի մասին» օրենքի ընդունմամբ, համակարգի հիմնարար սկզբունքները նոր հարթություն են տեղափոխվել:



1998-2000թթ.

Գործողության մեջ մտած անուղղակի հարկերը կարգավորող երկու նոր՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» և «Ակցիզային հարկի մասին» օրենքները ոչ միայն սկզբունքորեն վերափոխեցին հարկման մեխանիզմները, այլ նաև զգալի դրական ազդեցություն ունեցան արդեն իսկ 1999 թվականի պետական բյուջեի եկամուտների վրա:

Նոր օրենքներով անկախ ապրանքների և ծառայությունների ծագման երկրի, ամրագրվեց հարկի գանձման «նշանակման վայրի» սկզբունքը:



1998թ.

Ի լրումն ուղղակի հարկերի ոլորտում կատարված շրջադարձային փոփոխությունների, ներդրվեց պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների հաշվարկման նոր եղանակ:



1999-2000թթ.

Ուժի մեջ են մտել «Գույքահարկի մասին» և «Հողի հարկի մասին» օրենքները:

«Գույքահարկի մասին» օրենքի գործողությամբ հարկվող օբյեկտների ցանկից հանվել են մի շարք հիմնական միջոցներ՝ մեքենասարքավորումներ, ապրանքանյութական պաշարներ:

Հողային ռեֆորմի ընթացքում սեփականաշնորհված հողատեսքերի սեփականատերերը 2000 և 2001թթ. 50 տոկոսով ազատվեցին հողի հարկից:



1999-2001թթ.

1999 թվականի հունվարի 1-ից հարկային համակարգը համալրվեց ուղղակի հարկերը կարգավորող օրենքներով, որոնք էական ազդեցություն ունեցան ինչպես համակարգի բարելավման, այնպես էլ՝ հարկային բեռի նվազեցման առումով:

«Շահութահարկի մասին» օրենքով հարկի դրույքաչափը նախ սահմանվեց 15-25%, այնուհետև 2000թ.՝ 15%, 2001թ.՝ 10%, բանկերի համար՝ 20%: Օրենքը խրախուսում էր նաև ԼՂՀ-ում ներդրումների ներգրավումը:

«Եկամտահարկի մասին» օրենքի փոփոխությամբ հարկի դրույքաչափերը տարեսկզբից սահմանվել են 15-ից 30%, ամենամսյա եկամուտների չհարկվող նվազագույն շեմը՝ 8 հազ.-ից 17 հազ. դրամ, իսկ 2001թ. դրույքաչափն իջեցվել է մինչև 5%՝ չհարկվող նվազագույն շեմն իջեցնելով 10 հազար դրամի: ☑

# ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐՈՎ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԳԵՐԱԿՇԻՌ ՄԱՍԸ ԲԱԺԻՆ Է ԸՆԿՆՈՒՄ ԽՈՇՈՐՆԵՐԻՆ

Տնտեսվարողների մոտ կատարված ընդհանուր ստուգումները պետբյուջեին բերել են շուրջ 217.5մլն դրամ

**Ա**յս տարվա առաջին եռամսյակում ԼՂՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության կառուցվածքային ստորաբաժանումների կողմից իրականացվել է 178 ստուգում. նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ստուգումների թիվն ավելացել է 8-ով կամ 4.7%-ով: Միաժամանակ ստուգումները նվազել են 2008թ.-ի հունվար-մարտ ամիսների համեմատ՝ 14%-ով:

Ստուգումների արդյունքում՝ այս տարվա հունվար-մարտ ամիսների ընթացքում, լրացուցիչ հաշվարկվել է շուրջ 217.3մլն դրամից ավելի, ինչը շուրջ 107.9մլն դրամով կամ 98.7%-ով գերազանցում է 2009-ի և 209.9%-ով՝ 2008-ի նույն ժամանակահատվածներում արձանագրված ցուցանիշների համեմատ: Արդյունքում (այդ թվում՝ 2009-ին կատարված ստուգումների) ընթացիկ տարվա առաջին եռամսյակում պետբյուջե է մուտքագրվել 217.3մլն դրամից ավելի, ինչը շուրջ 107.9մլն դրամով կամ 98.7%-ով գերազանցում է 2009-ի և 209.9%-ով՝ 2008-ի առաջին եռամսյակների ցուցանիշները:

Այս տարի նշված ժամանակահատվածում կատարված ստուգումների ընդհանուր կառուցվածքում կենտրոնական ապարատի կողմից կատարված ստուգումների տեսակարար կշիռը կազմել է՝ ըստ ստուգումների քանակի՝ 31.5%, ըստ լրացուցիչ հաշվարկված գումարների՝ 86.6%, Ստեփանակերտի հարկային տեսչության կողմից՝

համապատասխանաբար՝ 20.8%, 8.7%, Ասկերանի շրջանի հարկային տեսչության կողմից՝ 7.9%, 0.6%, Մարտակերտի շրջանի հարկային տեսչության կողմից՝ 11.8%, 1.6%, Մարտունու շրջանի հարկային տեսչության կողմից՝ 9.0%,



**Առաջին եռամսյակում պետբյուջե է մուտքագրվել 217.4մլն դրամից ավելի, ինչը շուրջ 108մլն դրամով կամ 98.7%-ով գերազանցում է 2009-ի և 209.9%-ով՝ 2008-ի առաջին եռամսյակների ցուցանիշները:**

0.7%, Հաղարծնի շրջանի հարկային տեսչության կողմից՝ 6.7%, 0.6%, Շուշիի շրջանի հարկային տեսչության կողմից՝ 3.9%, 0.3%, Քաշաթաղի շրջանի հարկային տեսչության կողմից՝ 6.2%,

0.8%, Շահումյանի շրջանի հարկ վճարողների սպասարկման բաժնի կողմից՝ 2.2%, 0.1%:

Այս տարվա առաջին եռամսյակում կատարված ստուգումների վերլուծությունը ցույց է տալիս, որ գնալով բարձրանում է օպերատիվ տեղեկատվության վրա հիմնված ստուգումների քանակը. մասնավորապես նախորդ երկու տարիների հունվար-մարտ ամիսների համեմատ այս տարի նշված ժամանակաշրջանում ավելացել է ապօրինի գործունեության մասով կատարված ստուգումների թիվը: Արդյունքում առաջադրված գումարը հասել է շուրջ 8.1մլն դրամի. այս թիվը 6.3մլն դրամով ավելի է, քան 2009 թվականի առաջին եռամսյակում էր: Այդ ցուցանիշը, բնականաբար, գերազանցում է նաև 2008-ի հունվար-մարտ ամիսներին առաջադրված գումարները՝ ավելի քան 8մլն դրամով:

Հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ճշտության ստուգումների մասով այս տարվա առաջին եռամսյակում կատարվել է 20 ստուգում, այսինքն՝ արձանագրվել է նվազում նախորդ երկու տարիների նույն ժամանակահատվածների համեմատ՝ համապատասխանաբար՝ 2 և 47 ստուգումներով: Ընդ որում, լրացուցիչ առաջադրվել է 1.9մլն դրամի տուգանք: Այս դեպքում էլ նվազումը կազմում է՝ 2009-ի և 2008-ի հաշվետու ժամանակաշրջաններում առաջադրված գումարների համեմատ՝ համապատասխանաբար՝ 300.0 հազ. և 2400 հազ. դրամով: **Է**

ՀԻՇԵՔ ՀԱՐԿԱՅԻՆԸ  
**ՀԱՏԿԱՊԵՍ**  
 ԱՅՍ ՕՐԵՐԻՆ

Հունիս

I	II	III	IV	V	VI	VII
	1	2	3	4	5	6
7	8	9	10	11	12	13
14	15	16	17	18	19	20
21	22	23	24	25	26	27
28	29	30				

Հուլիս

I	II	III	IV	V	VI	VII
			1	2	3	4
5	6	7	8	9	10	11
12	13	14	15	16	17	18
19	20	21	22	23	24	25
26	27	28	29	30	31	

Օգոստոս

I	II	III	IV	V	VI	VII
						1
2	3	4	5	6	7	8
9	10	11	12	13	14	15
16	17	18	19	20	21	22
23 30	24 31	25	26	27	28	29

բոլոր մանրամասներն այստեղ՝

[www.tax.nk.am](http://www.tax.nk.am)

**tax**

ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ •>> Բարեփոխվող համակարգ •> Թարմ հայացք բիզնեսին >

# ՄԵՐ ԵՐԿՐԻ ՀԱՐԿԱՏՈՒՆ

## ՉԻ ՄՏԱԾԵԼՈՒ ՀԱՐԿԵՐԻՑ ԽՈՒՍԱՓԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մենք արդեն մոտենում ենք այդ ժամանակներին



Հայտարարում է ԼՂՀ ԿԱ ՀՊԾ  
պետի տեղակալ՝ Արթուր Հարությունյանը



**-Պրն Յարությունյան, հարկման մեխանիզմների արդյունավետ կիրառումը գլխավորապես պայմանավորված է հարկատու-հարկային մարմին հարաբերություններով: Այս ուղղությամբ ի՞նչ են արձանագրել ԼՂՀ հարկային մարմինները:**

-Այնպես է, որ հարկային համակարգին տրված հասարակության գնահատականը էական նշանակություն ունի: Յուրաքանչյուր նոր նախաձեռնություն հաջողությամբ կարող է իրագործվել միայն հասարակության աջակցությամբ, հետևապես հարկային ծառայությունը մեծ տեղ է հատկացնում հարկատու-հարկային մարմին փոխհարաբերությունների դաշտի բարելավմանը, ինչը մեծապես կախված է և՛ հարկային վարչարարությունից, և՛ հավաքագրված միջոցները պետության կողմից արդյունավետ և նպատակային օգտագործելուց, որով և ապահովվում է հարկերի վերադարձելիությունը հասարակությանը:

Ընդհանրապես, հարկայինը ձգտում է հասնել նրան, որ հարկատու նուսիսկ չմտածի հարկերից խուսափելու մասին. փոխարենը հարկ վճարողի համար առաջնային պետք է դառնա հարկային պարտավորությունների ժամանակին և ազնիվ կատարումը: Այս առումով, իմ համոզմամբ, կարևոր է հարկերի վճարման համակարգի և ընթացակարգերի պարզեցումը: Վստահ ենք, որ դա էապես կթելանացնի հարկատուների գործը, նաև հարկայինը կշահի՝ նվազեցնելով պահանջվող ծախսերը:

**-Եթե փորձենք այս փուլում հարցին մոտենալ հարկատուի տեսանկյունից, ապա ի՞նչ կարձանագրենք. ի՞նչ մակարդակի վրա են այսօր հարկատու-հարկային մարմին շփումները: Ի՞նչ եզրահանգման եք եկել, հարկային մարմինները հաճախ են իրենց գործունեությամբ խոչընդոտ հանդիսանում ձեռնարկատիրության համար:**

-Վերջին տարիներին հարկային ծառայության աշխատանքներում զգալի փոփոխություններ են կատարվել, հնարավորինս պարզեցրել ենք հարկային վարչարարությունը, հարկային ընթացակարգերը՝ հարկ վճարողի հաշվառման համարներից, գրանցման գրքերի

տրամադրման գործընթացից մինչև հաշվարկ-հաշվետվությունների ընդունումը: Բարձրացվել է նաև սպասարկման մակարդակը, այժմ իրականացվում է հարկ վճարողների միասնական սպասարկում, ինչը հեշտացնում է հաշվետվությունների հանձնման-ընդունման աշխատանքը և դրական է անդրադառնում հարկատուների հաշվետվական կարգապահության բարձրացման վրա:

Այս պահին աշխատում ենք հարկային հաշվետվությունների էլեկտրոնային եղանակով ընդունման, ընդհանուր համատարած ստուգումներից ռիսկային չափանիշների վրա հիմնված ստուգումներին անցնելու տարբերակների վրա, ինչը հաջողությամբ իրագործելու դեպքում զգալիորեն կբարելավվի հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների որակը:

**-Որքանով է այսօր տեղեկացված Ղարաբաղի հարկատու: Հարկային համակարգին հաջողվո՞ւմ է պատշաճ մակարդակով իրականացնել հարկատուների իրազեկումը, մասնավորապես՝ օրենսդրության վերաբերյալ:**

- Իրազեկել, այնուհետև՝ վերահսկել. այս սկզբունքն է դրված հարկային մարմնի աշխատանքների հիմքում, քանի որ գործնականում շատ հաճախ տնտեսվարող սուբյեկտների՝ օրենքների պահանջների չիմացությունն է թույլ տրվող սխալների և բացթողումների պատճառ դառնում:

Այդ առումով հարկային ծառայությունը ձգտում է առավելագույնս իրականացնել իր հիմնական գործառնությունից մեկը՝ հարկային օրենսդրության դրույթների մասին հարկ վճարողներին իրազեկելը:

Հարկային օրենսդրության, ենթաօրենսդրական ակտերի փոփոխությունների իրազեկման և պարզաբանման նպատակով հարկ վճարողների հետ պարբերաբար կազմակերպվում են սեմինար-խորհրդակցություններ, ինչպես հանրապետության մայրաքաղաքում, այնպես էլ՝ այլ շրջաններում: Հարկ վճարողները հարկային օրենսդրության պարզաբանումներ ստանում են հիմնականում գրավոր և բանավոր հարցադ-

րումների միջոցով. տարածքային ստորաբաժանումներում՝ սպասարկման բաժինների կողմից ևս իրականացվում են տեսչություն այցելած հարկ վճարողների իրազեկման աշխատանքներ: Բացի այդ, հարկ վճարողները կարող են իրենց հուզող հարցերը հարկային մարմնին ուղղել նաև կայքի միջոցով և արագ ստանալ դրանց պատասխանները: Այդ նպատակին է ծառայում նաև կենտրոնական ապարատում գործող «թեժ գիծ»-ը:

**-Պրն Յարությունյան, հարկատու-հարկային մարմին հարաբերությունների բարելավման համատեքստում ի՞նչ միջոցառումներ են ձեռնարկվել, որպեսզի աշխատակիցները մշտապես պատասխանատվությամբ մոտենան իրենց գործին:**

-Այդ խնդիրը ևս համակարգի ղեկավարության մշտական ուշադրության կենտրոնում է՝ հարկային ծառայողների վարքագծի կանոնների պահպանումը, նրանց հագուկապը, վարվելակերպը հարկատուների հետ:

**Միանշանակ կարող եմ ասել, որ համակարգի աշխատակիցների կողմից ծառայողական պարտականությունների խախտման յուրաքանչյուր փաստ քննության է առնվում:**

Այսպես, 2009թ.-ին ծառայողական քննություններ անցկացնող հանձնաժողովի կողմից քննվել է աշխատակիցների կողմից թույլ տրված խախտումների 23 դեպք, որի արդյունքում կարգապահական պատասխանատվության են ենթարկվել 19 հարկային ծառայողներ:

**Իսկ այս տարվա առաջին չորս ամիսների ընթացքում քննվել է աշխատակիցների կողմից թույլ տրված խախտումների 12 դեպք, և արդյունքում կարգապահական պատասխանատվության են ենթարկվել 11 հարկային ծառայողներ:**

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում աշխատողների մասնագիտական պատրաստվածությանը: Պարբերաբար անցկացվում են ատեստավորումներ և վերապատրաստման դասընթացներ: 

# ՄԱՐՏԱԿԵՐՏԸ ԴԱՐՁՅԱԼ ՇՆՉՈՒՄ Է.

Երբեմնի արդյունաբերական հսկան վերականգնում է դիրքերը



«Ա մենաաղքատը միանգամից սնանկացած մեծահարուստն է».

մեկ նախադասությամբ, թերևս, այսպես կարելի է բնորոշել երբեմնի արդյունաբերական հսկա՝ ԼՂՀ Մարտակերտի շրջանը՝ պատերազմից հետո: Հենց սա էր այն շրջանը, որը հարուստ էր գյուղատնտեսական ու արդյունաբերական ձեռնարկություններով. շատերն են հիշում գինու և լիմոնադի գործարանները, կաթի և փայտամշակման կոմբինատները, կրթամշակութային մի շարք օբյեկտները և այլն...

Մեր Մարտակերտը մեծ հարված ստացավ հատկապես այն ժամանակ, երբ գտնվում էր հակառակորդի ձեռքերում. շուրջ մեկ տարվա ընթացքում քայքայվեցին արտադրական հզորությունները, բնակֆոնդի գերակշիռ մասը...

«ԼՂՀ իշխանություններն ամբողջությամբ շրջվում են դեպի գյուղը. սկզբնական շրջանում ուշադրության կենտրոնում լինելու է հատկապես Մարտակերտը՝ պատերազմից ամենաշատը տուժած շրջանը», - դեռևս նախընտրական քարոզարշավի ժամանակ սա է հայտարարել ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը:

Քարոզարշավից շատ կարճ ժամանակ անց Մարտակերտ է հասնում բնական գազը, ջրագիծը, վերականգնվում է բնակֆոնդը, գյուղատնտեսությունը... Մարտակերտը դարձյալ շնչում է, տնտեսությունը՝ ոտքի կանգնում: Պետական և մասնավոր կառույցների ծրագրերն այս շրջանում դեռ չեն ավարտվել, ավելին՝ օրեցօր նոր թափ են ստանում:

Մարտակերտի վերածննդի գործում հսկայական դեր ունեն, իհարկե, հարկային մարմինները: Միայն այս տարվա առաջին եռամսյակում շրջանի հարկահավաքները պետբյուջե են փոխանցել 130 մլն դրամից ավելի:



# ՀԱՐԿԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՆ ԱՃԵԼ.

## Մարտակերտն արդեն գրավիչ է բիզնեսի համար

**Արձանագրում է  
Մարտակերտի հարկային  
տեսչության պետ՝  
Վեսամիր Գրիգորյանը**



- Պարոն Գրիգորյան, Դուք համակարգում աշխատում եք դրա ստեղծման առաջին իսկ օրվանից՝ զբաղեցնելով տարբեր պաշտոններ՝ գլխավոր տեսուչից մինչև տեսչության պետ: Ինչպիսի՞ն էր հարկային ծառայությունը տարիներ առաջ և այսօր:

- Ինչպես բոլոր կառույցները, այնպես էլ, բնականաբար, հարկային համակարգը տարեցտարի կատարելագործվում է: Ավելին, վերջին տարիներին նախաձեռնված լայնածավալ բարեփոխումներն արագ տեմպերով են ընթանում: Մեր տեսչության օրինակով կարող եմ ասել, որ դրական արդյունքներն արդեն իսկ շոշափելի են: Եթե դեռ ոչ վաղ անցյալում կենտրոնական աշխատակազմ տեղեկատվություն ներկայացնելու համար պահանջվում էր բավականին ժամանակ, ապա այսօր այդ խնդիրը լուծված է. կենտրոնական ապարատի և տեսչությունների միջև

ներդրվել է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ, որն ապահովում է ստորաբաժանումների միջև ուղիղ և արագ կապ: Տեսչությունը նաև տեխնիկապես է զինվել: Այժմ մենք հնարավորություն ունենք, օգտվել

**Մարտակերտի հարկային տեսչությունում հաշվառված է 731 հարկ վճարող, որոնցից գործում է ընդամենը 368-ը:**

լով տվյալների բազայից, իրականացնել հաշվարկ-հաշվետվությունների փորձաքննություն, ինչը թույլ է տալիս ավելի արագ և որակով սպասարկել հարկատուներին՝ առանց հերթերի գոյացման. դա միանշանակ դրական է անդրադառնում հարկատուների կարգապահության բարձրացման վրա:

- Ձեր դիտարկմամբ, տեսչությունում հաշվառված հարկատուները որքանո՞վ են պարտաճանաչ:

- Այս առումով կարող եմ միանշանակ փաստել, որ հարկային պարտավորությունների կատարումից չարամտորեն խուսափելու դեպքեր մեզ մոտ չեն արձանագրվել: Եթե այս կամ այն տնտեսվարող սուբյեկտի կողմից խախտում է գրանցվում, ապա միայն հարկային օրենսդրությանը ոչ լիարժեք տիրապետելու հետևանքով: Բայց մենք դրա լուծումն էլ ենք գտել. հարկային տեսչության կողմից պարբերաբար իրագրված աշխատանքներ են տարվում: Իսկ հաճախ էլ հասցնում ենք անգամ յուրաքանչյուր հարկատուի հետ՝ մեկ առ մեկ, բացատրական աշխատանքներ տանել և պարզաբանումներ տալ. դա մեզ հաջողվում է՝ հաշվի առնելով տեսչության կողմից սպասարկվող հարկ վճարողների քանակը. այն փոքրաթիվ է: Ես, որպես ղեկավար, նկատում եմ մեծ

տեղաշարժ՝ հարկ վճարողների հարկային կարգապահության բարձրացման առումով:

**- Այդպիսի ծավալի աշխատանքն արդյունավետ կազմակերպելու համար պետք է որ արհեստավարժ կադրեր ունենաք: Կարո՞ղ եք փաստել, որ Մարտակերտի հարկային տեսչությունում այդ խնդիրն էլ է լուծված:**

- Միանշանակ կարող եմ ասել, որ մեր տեսչության բոլոր աշխատակիցները մեծ պատասխանատվությամբ են մոտենում իրենց պարտականություններին, մշտապես աշխատում են իրենց մասնագիտական գիտելիքների բարձրացման ուղղությամբ: Տեսչության թափուր պաշտոնների համալրումն իրականացվում է մրցութային կարգով: Դրան զուգահեռ կենտրոնական ապարատում պարբերաբար կազմակերպվում են հարկային ծառայողների ատեստավորումներ, վերապատրաստման դասընթացներ՝ ուղղված հարկային ծառայողների արհեստավարժության բարձրացմանը, աշխատանքային ունակությունների կատարելագործմանը: Մարտակերտի հարկայինում ևս ստեղծված են անհրաժեշտ բոլոր պայմանները՝ աշխատողների մասնագիտական գիտելիքներին համապատասխան ծառայողական առաջիադացումն ապահովելու նպատակով:

Այդուհանդերձ, հարկային ծառայողների թափուր պաշտոնների համալրման խնդիրը շարունակում է արդիական մնալ Մարտակերտում: Կադրերի ընտրության առումով որոշ դժվարություններ են առաջանում: Հայտարարվող մրցույթների նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերող դիմորդների քանակն այդքան մեծ չէ, նկատվում է նաև մասնագիտական պատրաստվածության պակաս: Այս բացը լրացնելու համար կիրառվում է պայմանագրային հիմունքներով աշխատանքի ընդունման պրակտիկան, նաև՝ ռոտացիայի սկզբունքը և այլ տարբերակներ:

**- Նշեցիք, որ Մարտակերտի տեսչության կողմից սպասարկվող հարկատուների ցանկն այդքան էլ մեծ չէ: Այսինքն՝**



Մարտակերտի հարկայինում ևս ստեղծված են անհրաժեշտ բոլոր պայմանները՝ աշխատողների մասնագիտական գիտելիքներին համապատասխան ծառայողական առաջիադացումն ապահովելու նպատակով:

**քանի՞ հարկ վճարող է հաշվառված ձեզ մոտ և հիմնականում ո՞ր ոլորտներն են նրանք ներկայացնում:**

- Մարտակերտի հարկային տեսչությունում հաշվառված է 731 հարկ վճարող,

կատու, գործում է առևտրի ոլորտում, ունենք նաև արտադրության, շինարարության, հանրային սննդի, տրանսպորտային ծառայությունների մատուցման ոլորտներում գործող հարկ վճարողներ:

**- Պլանային առաջադրանքների հետ կապված ի՞նչ արդյունքներ եք արձանագրել այս տարվա առաջին եռամսյակում:**

- Այս տարվա հունվար-մարտ ամիսներին հարկային եկամուտները, տուրքերը և պարտադիր սոցիալական ապահովության վճարները կազմել են շուրջ 130.9 մլն դրամ, ինչը պլանավորված ցուցանիշը գերազանցել է 5.5%-ով կամ 6.8 մլն դրամով, իսկ 2009թ.-ի նույն ժամանակահատվածի ցուցանիշը՝ 12.6%-ով կամ 14.6 մլն դրամով: Սոցիալական ապահովության վճարները կազմել են 72.2 մլն դրամ՝ 6.5%-ով գերազանցելով պլանավորված ցուցանիշը և 15.8%-ով՝ 2009թ. ցուցանիշը: Մեզ հաջողվել է գերակատարում ապահովել աշխատանքի ճիշտ կազմակերպման և արդյունավետ վարչարարության շնորհիվ: ☑

**Հունվար-մարտ ամիսներին հարկային եկամուտները, տուրքերը և պարտադիր սոցիալական ապահովության վճարները կազմել են շուրջ 130.9 մլն դրամ, ինչը պլանավորված ցուցանիշը գերազանցել է 5.5%-ով կամ 6.8 մլն դրամով, իսկ 2009թ.-ի նույն ժամանակահատվածի ցուցանիշը՝ 12.6%-ով կամ 14.6 մլն դրամով:**

որոնցից գործում է ընդամենը 368-ը: Տեսչության կողմից սպասարկվող հարկ վճարողների գերակշիռ մասը՝ 239 հար-



# ԱՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԿՈՆՅԱԿԻ ԳՈՐԾԱՐԱՆ ՓԲԸ



*Մեր պապերը խմում էին  
Արցախ աշխարհի լավագույն գինիները,  
որի ավանդույթը վերականգնվել է այսօր*

**Tax top** ■ ► Համարի թեմա ► Էլեկտրոնային ապագա ►

# ՀԱՐԿԱՏՈՒ ON-LINE.

Մինչ շատ պետություններ քննարկում են, Ղարաբաղում գործի են անցել

ԼՂՀ ԿԱ հարկային պետական ծառայությունում արդեն գործարկված համակարգի առավելություններն է ներկայացնում համակարգչային տեխնոլոգիաների ներդրման և սպասարկման բաժնի պետ՝ Միեր Ջհանգիրյանը:





**-Պրն Ջհանգիրյան, Լեռնային Ղարաբաղի հարկային համակարգն արդեն անցում է կատարում տեղեկատվական առաջատար համակարգի: Կարո՞ղ եք մատնանշել այս նորամուծության առավելությունները:**

-Համակարգում ներդրված է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգը, որն այլ կերպ անվանում ենք նաև ներքին պորտալ: Այս համակարգի կիրառմամբ արդեն տեղեկատվությունը հասանելի է դառնում իրական ժամանակում՝ on-line ռեժիմով, այսինքն՝ տեղեկատվության պահպանումը ևս իրականացվելու է միասնական համակարգում:

Բոլորը գիտեն, թե ինչ պատկեր էր մինչև նոր համակարգի կիրառումը. օրինակ, տեղեկատվությունը տարածքային հարկային տեսչություններից կենտրոնական ապարատ ստացվում էր որոշակի պարբերականությամբ, ինչն օրեցօր զարգացող տեխնոլոգիաների պարագայում ընդունելի չէ: Իսկ այս հզոր համակարգի կիրառմամբ իրավիճակը 180 աստիճանով փոխվում է. այժմ անհրաժեշտ տեղեկատվությունը տեսչություններից հավաքագրվում է արդեն իրական ժամանակում: Սա գլխավոր առավելություններից մեկն է:

Մշակվել է ԱԱՀ-ի հարկային հաշիվների խաչաձև ստուգման ենթահամակարգ, բոլոր հաշվետվությունների, հայտարարագրերի, տեղեկանքների մուտքագրման, դիտման, տպագրման ծրագրերը, ստանդարտ հաշվետվությունների կազմումը, փորձնական գործարկվում է նաև անձնական հաշվի քարտերի ավտոմատացված վարման ենթահամակարգը:

**-Այսինքն՝ հարկային մարմինը տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումից միանշանակ շահում է:**

-Իհարկե: Հարկային ծառայությունը հսկայական ժամանակ էր ծախսում՝ հարկ վճարողներից ստացված հարկային հաշվետվությունները համակարգիչ մուտքագրելու, հարկ վճարողների անձնական հաշիվների քարտերի վար-

ման, ծանուցագրերի պատրաստման ու տրամադրման վրա, ինչը, բնականաբար, անարդյունավետ էր՝ հաճախ հանդիսանալով թույլ տրվող սխալների և բացթողումների հիմնական պատճառը: Այսպիսով մենք էապես ժամանակ կիսնայենք, և ոչ միայն. մինչ այդ հարկային մարմինների կողմից իրենց գործառնությունների իրականացման վրա ծախսվում էր նաև հսկայական մարդկային ներուժ: Տեղեկատվական նոր համակարգն այդ հարցի պատասխանն էլ է տալիս՝ նվազում է մարդկային գործունե, հետևապես նաև՝ սխալվելու հավանականությունը:

Պարզ է, որ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման արդյունքում նկատելիորեն կմեծանա հարկային համակարգի ընդհանուր ներուժը, որը կարող է ուղղվել ավելի որակյալ վերլուծությունների և ստուգումների իրականացմանը:

**-Առաջատար այս ծրագիրը, բնականաբար, նաև այլ հնարավորություններ կունենա: Նշված առավելություններից բացի, հրատապ ի՞նչ խնդիրներ լուծում կստանան համակարգի գործարկմամբ:**

-Նոր ծրագիր ասելով՝ նկատի ունենք կենտրոնացված, այլ ոչ թե տեղաբաշխված համակարգ, տարբեր ենթահամակարգեր պարունակող, հեշտությամբ ընդլայնելի և այլ համակարգերի հետ ինտեգրվող ծրագիր: Միանգամից նշեմ, որ բոլոր այն առավելությունները, որ ունի նոր համակարգը, շահեկան են ոչ միայն պետության, այլ նաև՝ բիզնեսի համար: Նաև հարկատուներն են ժամանակ տնտեսելու: Մասնավորապես, ծրագրի առանձին ենթահամակարգերի մշակումից հետո հնարավորություն կստեղծվի հարկային մարմիններ հաշվետվությունները ներկայացնել էլեկտրոնային եղանակով, իրականացնել ռիսկային չափանիշների վրա հիմնված ստուգումներ, ավտոմատացնել կամերալ ուսումնասիրությունների անցկացումը, ստուգման հանձնարարագրերի հրապարակումն ու ստուգման ակտերի կազմումը:

**-Պրն Ջհանգիրյան, փաստորեն մշակվող ծրագիրն օժտված է նույն հնարա-**

**վորություններով, ինչ ՀՀ ՊԵԿ «Հարկատու-3» համակարգը:**

-Այո, ծրագիրը մշակելիս՝ ուսումնասիրել ենք «Հարկատու-3»-ի հնարավորությունները: Պարբերաբար աշխատանքներ են տարվում նաև ծրագրերի ինտեգրացման ուղղությամբ՝ ԼՂՀ ԿԱ ՀԳԾ և ՀՀ

**Նվազում է մարդկային գործունե, հետևապես նաև՝ սխալվելու հավանականությունը:**

**Այս հզոր համակարգի կիրառմամբ իրավիճակը 180 աստիճանով փոխվում է. այժմ անհրաժեշտ տեղեկատվությունը տեսչություններից հավաքագրվում է արդեն իրական ժամանակում:**

**Բոլոր այն առավելությունները, որ ունի նոր համակարգը, շահեկան են ոչ միայն պետության, այլ նաև՝ բիզնեսի համար: Նաև հարկատուներն են ժամանակ տնտեսելու:**

**Ծրագրի առանձին ենթահամակարգերի մշակումից հետո հնարավորություն կստեղծվի հարկային մարմիններ հաշվետվությունները ներկայացնել էլեկտրոնային եղանակով:**

ԿԱ ՊԵԿ միջև տեղեկատվության փոխանակման հետ կապված: Եվ կարծում եմ, ոչ հեռու ապագայում արդեն ծրագրի նախանշված բոլոր ենթահամակարգերը փաստացի կգործարկվեն:

Այնպես որ, Ղարաբաղի հարկատուն էլ կկարողանա առանց փաստաթղթային քաշքշուկների և հերթերի՝ on-line ռեժիմում հարկերը վճարել և հանգիստ քնել:

# 2009-ԻՆ ԼՂՀ ՊԵՏՔՅՈՒԶԵԻ ՍՈՒՏՔԵՐԻՑ 10ՍԼՐԴ ԴՐԱՄԸ ՎՃԱՐԵԼ ԵՆ 100 ԽՈՇՈՐ ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐԸ



## 2009թ.

ընթացքում ԼՂՀ առաջին 100 խոշոր հարկատուների կողմից վճարված հարկերի, տուրքերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գումարը կազմել է 10.2մլրդ դրամ: Դա կազմել է ԼՂՀ պետբյուջեի հարկային եկամուտների, պետական տուրքերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների ընդհանուր մուտքերի 53.3%-ը: Նկատենք, որ 2008-ին 100 խոշոր հարկատուների վճարած հարկերի ընդհանուր գումարը կազմել էր շուրջ 10մլրդ դրամ, այսինքն՝ ընդհանուր մուտքերի 58.1%-ը:



## 100 ԽՈՇՈՐՆԵՐԻ ԱՌԱՋԱՏԱՐԸ «ԲԵՅԶ ՄԵԹՃԼՍ»-Ն Է

100 խոշորների ցանկը, ինչպես 2008-ին, այնպես էլ 2009-ին գլխավորել է «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ-ն: Այդ ժամանակահատվածներում ընկերության կողմից վճարվել են համապատասխանաբար 2.4մլրդ և 2.8մլրդ դրամ հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ: Ընդ որում, ինչպես նկատեցիք, թիվ մեկ հարկատուին հաջողվել է անգամ ճգնաժամային 2009թ.-ին որոշակի տնտեսական աշխուժություն արձանագրել՝ նախորդ տարվա համեմատ:

Ինչ վերաբերում է առաջին եռյակին, ապա «Բեյզ Մեթըլս»-ին հաջորդում են «Ղարաբաղ Տեյեկոմ»-ը և «Արցախէներգո»-ն: Երեք խոշոր հարկ վճարողների կողմից անցած տարի ԼՂՀ պետբյուջե է փոխանցվել 4.7մլրդ դրամ, այսինքն՝ հարկային եկամուտների 24.3%-ն ապահովել են 3 խոշորները: 2008-ին, ի դեպ, այդ ցուցանիշն ավելի բարձր է եղել՝ 4.9մլրդ դրամ կամ 28.4%-ը:

## ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԳՐԵԹԵ 57 ՏՈԿՈՍՆ ԱՊԱՅՈՎԵԼ ԵՆ 100 ԽՈՇՈՐՆԵՐԸ

Ըստ 100 խոշոր հարկ վճարողների կողմից հայտարարագրված՝ պետական բյուջե հաշվարկված և վճարված հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների ցուցանիշի մեծության՝ նկատվել է աճի միտում: Հաշվարկված հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների ցուցանիշը 2008թ.-ին կազմել էր 9.2մլրդ, իսկ 2009թ.-ին՝ 10.7մլրդ դրամ: Իսկ վճարված հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների ցուցանիշը 2009թ.-ին՝ 2008թ.-ի համեմատությամբ աճել է 548.9մլն դրամով կամ 5.6%-ով և կազմել 10.4մլրդ դրամ:

100 խոշոր հարկատուների վճարած հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ 2008թ. և 2009թ. ունեցել է

հետևյալ պատկերը. եթե 2008թ. այն կազմել է ընդհանուրի 60.7%-ը, ապա 2009թ.-ին՝ 56.8%-ը: Առաջին 6 խոշոր հարկ վճարողների կողմից հաշվարկված և պետական բյուջե վճարված հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների մասով նկատելի է հետևյալը. հաշվարկված հարկերը, տուրքերը, պարտադիր վճարները 2008թ.-ին կազմել են 5.6մլրդ դրամ, իսկ 2009թ.-ին այդ ցուցանիշը հասել է 5.9մլրդ դրամի: Այսինքն՝ հաշվարկվածի մասով գրանցվել է 5.7% աճ, իսկ վճարվածը՝ համապատասխանաբար՝ 6.6մլրդ և 5.8մլրդ դրամ: Նվազման միտումն այս դեպքում 12.7% է՝ 846մլն դրամ:

100 խոշոր հարկ վճարողների կողմից հայտարարագրված աշխատողների միջին ամսական ցուցակային թվի և աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների ցուցանիշների մասով 2009թ.-ին նկատվել է աճի միտում՝ նախորդ տարվա



**Հաշվարկված հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների ցուցանիշը 2008թ.-ին կազմել էր 9.2մլրդ, իսկ 2009թ.-ին՝ 10.7մլրդ դրամ: Իսկ վճարված հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների ցուցանիշը 2009թ.-ին՝ 2008թ.-ի համեմատությամբ աճել է 548.9մլն դրամով կամ 5.6%-ով և կազմել 10.4մլրդ դրամ:**

համեմատ: Աշխատողների միջին ամսական ցուցակային թիվը 2008թ.-ին կազմել էր 7880 մարդ, 2009թ.-ին՝ 8470 մարդ, իսկ աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների ցուցանիշը 2008-2009թթ. կտրվածքով համապատասխանաբար կազմել է 8.4մլրդ և 10.3մլրդ դրամ: Միջին ամսական աշխատավարձը 2008-ին կազմել էր 88.7 հազար, իսկ 2009-ին՝ 101.3 հազար դրամ, այն դեպ-

քում, երբ ընդհանուր միջին ամսական աշխատավարձը 2008թ.-ին կազմել էր 63.7 հազար դրամ, իսկ 2009թ.-ին՝ 73.8 հազար դրամ: Առաջին 6 խոշոր հարկատուների մասով աշխատողների միջին ամսական ցուցակային թիվը 2009թ.-ին՝ 2008-ի համեմատ, գրեթե փոփոխության չի ենթարկվել՝ տատանվելով 3800 հոգու սահմաններում, իսկ աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների ցուցանիշը 2009թ.-ին աճել է 376.6մլն դրամով՝ կազմելով 5.6մլրդ դրամ:

## ԽՈՇՈՐ ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐԸ ԸՍՏ ԻՐԵՆՑ ԻՐԱՑՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԻ

2009թ.-ին՝ ըստ ծավալի, 100 խոշոր հարկ վճարողների ցուցանիշների պատկերը հետևյալն է.

եթե հարկ վճարողների կողմից հայտարարագրված իրացման ծավալի ցուցանիշը (առանց ԱԱՀ-ի) 2008թ.-ին շուրջ 86մլրդ դրամ էր, ապա 2009-ին այն կազմել էր 99.1մլրդ դրամ: Իսկ դա նշանակում է, որ նախորդ տարվա համեմատ իրացման ծավալի աճ է արձանագրվել՝ 13.1մլրդ դրամով կամ 15.3 տոկոսով: Այս ցուցանիշն առավել արտահայտիչ է առաջին 6 խոշոր հարկատուների մոտ. այս մասով 2009թ.-ին՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, իրացման ծավալն աճել է 6.7մլրդ դրամով կամ 22.7%-ով՝ կազմելով 36.4մլրդ դրամ:

Հարկ վճարողների կողմից հայտարարագրված իրացման ծավալի ցուցանիշի մասին (առանց ԱԱՀ-ի) առավել պարզ պատկերացում կազմելու համար հարկ է բնութագրել նաև 100 խոշոր հարկատուների իրացման ծավալի տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ. եթե 100 խոշոր հարկատուների իրացման ծավալը 2008թ.-ին կազմել է ընդհանուրի 68.6%-ը, ապա 2009թ.-ին այն նվազել է՝ կազմելով 66.2%:

**ԱՌԱՋԻՆ 100 ԽՈՇՈՐ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՎԱԾ ՀԱՐԿԵՐԻ ԵՎ ՏՈՒՐՔԵՐԻ ՄԵԾՈՒՅՑՈՒՆՆԵՐԸ**

Զ/Զ	ՀՎՀՀ	Հարկ վճարողի անվանումը	Հարկ վճարողի գտնվելու վայրը	2010թ. ֆինանսական տարվա սկզբից հունվար-մարտ ամիսներին հարկ վճարողի կողմից ԼՂՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը /հազ. դրամ/				
				այդ թվում				
				Ընդամենը	ուղղակի հարկեր (այդ թվում՝ շահութահարկ. եկամտահարկ)	անուղղակի հարկեր (այդ թվում՝ ԱԱՀ. ակցիզային հարկ)	հաստատա գրված վճարներ	այլ հարկեր. տուրքեր և պարտադիր վճարներ
1.	90016169	«Բեյզ մեթըլ» ՓԲԸ	գ. Դրմբոն	698687.1	83736.4	411375.4		203575.3
2.	90015278	«Ղարաբաղ Տեյեկոմ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	316198.9	31954.9	274328.9		9915.1
3.	90010189	«Արցախսագազ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	194596.3	8770	181950		3876.3
4.	90000186	«Արցախէներգո» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	101101.9	15378.9	78455.6		7267.4
5.	90001386	«Արցախբանկ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	98620.2	94742.6	2500.4		1377.2
6.	90070057	«Արցախ Բրենդի կոմպանի» ՓԲԸ	ք. Ասկերան	28809.1		28113.1		696
7.	90017188	«Պանտ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	25344.5	4641.4	20167.6		535.5
8.	90003442	«Կապավոր» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	25213.6	859.5	24329.1		25.0
9.	90026446	«Գլոբալ Շին» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	23310.0	3100.0	19100.0		1110.0
10.	90013565	«Աշոցք» ՍՊԸ	ք. Ասկերան	22839.2	3929.8	16575.9		2333.5
11.	90213015	«Ավանգարդ» ՍՊԸ	ք. Մարտունի	18679.1	286.2	4.229.2	1.606.0	12.557.7
12.	90028183	«Յորիզոն թրեյդ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	16188.0	935.0	14700.0		553.0
13.	90013144	«Պետրոլ սերվիս» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	15553.1	736.9	24.8	13.732.3	1.059.1
14.	90003261	«Խաչեն» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	15484.6	2996.5	11242.0		1246.1
15.	90009361	«Արցախճան ինստիտուտ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	14113.5	3500.0	10003.4		610.1
16.	90000324	ԼՂՀ Ոստիկանության պետական պահպանության վարչություն	ք. Ստեփանակերտ	12305.6	320.1	11.737.0		248.5
17.	90022317	«Գրանդ կոմերց» ՍՊԸ Արցախի մասնաճյուղ	ք. Ստեփանակերտ	11728.4	532.3			11.196.1
18.	90020698	«ԱՏՐ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	11569.6	1951.3	9180.0		438.3
19.	90026928	«Տեխնոտաժ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	11549.7	644.2	10370.0		535.5
20.	90001705	«Օլեան» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	11247.9	321.3			10.926.6
21.	90212588	«Լուսակերտ» ՍՊԸ	ք. Մարտունի	10869.0	462.4	9.359.8		1.046.8
22.	90008901	ԼՂՀ «Հանրային հեռուստառադիոընկերություն» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	10740.0	1.070.0	9.448.9		221.1
23.	90022272	«Ստեփանակերտի կոնյակի գործարան» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	10225.0		10200.0		25
24.	90018172	«Կապիտալ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	9472.5	155.0			9.317.5
25.	90282605	«Հաբանդ» ՍՊԸ	գ. Տող	9394.5	3208.1	5521.2		665.2
26.	90018697	«Միլենա Էստերպարայգիս ԼԼԿ Արցախ կարի-կոշիկի արտ. միավ.» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	8693.0	2.956.4	2.682.9		3.053.7
27.	90002698	«Արցախկապ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	8606.9	899.4	6.909.0		798.5
28.	90073399	«Նարվա» ՓԲԸ	ք. Ասկերան	8576.4	307.7	121.2	7.826.0	321.5
29.	90002165	«Վիրաժ» ԱԿ	ք. Ստեփանակերտ	8307.7	4584.0	2797.2		926.5
30.	90027079	«Պրիմա գրուպ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	8246.7	67.9		47.2	8.131.6
31.	90018209	«Դելտա-Ա» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	8040.1	595.4	7318.3		126.4
32.	90027105	«Նավա» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	7991.3	1997.0	5551.3		443.0
33.	90012365	«Քարավան» ՍՊԸ	գ. Բերքաձոր	7800.3	3130.3	3473.0		1197.0
34.	90023576	«Փոր Դիրեկշն» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	7726.6	3871.1		1136.5	2719.0
35.	90018955	Ստեփանակերտի «Ագրոսերվիս» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	7570.2	1000.0	6355.0		215.2
36.	90016787	«Սիգմա գրուպ սերվիս» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	7471.5	6434.5	405.1		631.9
37.	90022248	«Բուրգ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	7320.7	1019.7	6089.2		211.8
38.	90006038	«Ջրային տնտեսություն» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	7190.9	1778.0	1919.6		3493.3
39.	90019907	«Արտադրական կոմբիատ - 3» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	7088.2	1.109.9	4.881.9		1.096.4
40.	90025118	«Ստրոյ Սիտի» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	6990.1	916.8	5761.3		312.0
41.	90018654	«Ֆլեշ-պլուս» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	6968.3	492.4		5.401.7	1.074.2
42.	90070246	«Սևան» ՍՊԸ	գ. Իվանյան	6654.5	283.9	171.5	5.629.4	569.7
43.	90025315	«Արցախ ՅԷԿ» ԲԲԸ	ք. Ստեփանակերտ	6603.7	2292.1			4311.6
44.	90000298	«Ջերմային տնտեսություն» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	6398.6	588.0	5771.0		39.6
45.	90213737	«Պրոմագրոսերվիս» ՓԲԸ	ք. Մարտունի	6392.3	933.8	4.878.0		580.5
46.	90025073	«Ամուր տակիք» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	6340.0	1820.0	4430.0		90.0
47.	90012812	«Ստեփանակերտ Սերվիս» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	6165.1	491.2	2.4	5340.0	331.5
48.	90018095	«Արդշինվեստբանկ» ՓԲԸ Ստեփանակերտի մասնաճյուղ	ք. Ստեփանակերտ	6128.9	1.449.9	3.806.2		872.8
49.	90019228	«Օմեգա գրուպ» ՍՊԸ	ք. Ստեփանակերտ	6124.8	78.8		4.000.0	2.046.0
50.	90016177	«Հայաստանի բիզնեսի հիմնադրամ» ՓԲԸ	ք. Ստեփանակերտ	5905.1	5.605.1			300.0



**ԱՌԱՋԻՆ 100 ԽՈՇՈՐ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԿՈՐՄԻՑ ՎՃԱՐՎԱԾ ՀԱՐԿԵՐԻ ԵՎ ՏՈՒՐԵՐԻ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հ/Հ	ՀՎՀՀ	Հարկ վճարողի անվանումը	Հարկ վճարողի գտնվելու վայրը	2010թ. ֆինանսական տարվա սկզբից հունվար-մարտ ամիսներին հարկ վճարողի կողմից ԼՂՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը /հազ.դրամ/				
				այդ թվում				
				Ընդամենը	ուղղակի հարկեր (այդ թվում՝ շահութահարկ, եկամտահարկ)	անուղղակի հարկեր (այդ թվում՝ ԱԱՀ, ակցիզային հարկ)	հաստատա գրված վճարներ	այլ հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ
52.	90025813	«Տեխնոշին» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	5859.8	1909.2			3950.6
53.	90018886	«Գևատ» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	5825.5	70.4			5.755.1
54.	90017582	«Մերկուրի» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	5503.3	632.7			4.870.6
55.	90005946	«Ֆորդոն» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	5247.2	166.1			5.081.1
56.	90021727	«Պեպիտո» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	5224.1	140.1			5.084.0
57.	90012099	«Ֆարմսերվիս» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	5210.3	1.043.3	3.528.8		638.2
58.	90013333	«Արցախերկսեմետ» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	5180.4	4.698.7			481.7
59.	90026025	«Երեքնուկ» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	5121.0	24.0			5.097.0
60.	90001138	«Մեխտրանսպորտ» ԱԿ	ք.Ստեփանակերտ	5035.3	1161.4	3627.1		246.8
61.	90003099	«SBS» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	4680.2	419.0			4.261.2
62.	90014541	«Դիզակ պլուս» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	4626.2	1.438.6	2.862.6		325.0
63.	90012322	«Բակարանային շահագործման տնտեսություն» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	4535.0	850.0	3400.0		285.0
64.	90414369	Բաղդասարյան Արմեն ա/ձ	ք.Ստեփանակերտ	4483.9	216.6			4267.3
65.	90016752	«Ծանշին» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	4407.8	2289.5	1146.1		972.2
66.	90005027	«Ջրմուղ-Կոյուղի» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	4329.0	2629.9	1599.1		100.0
67.	90024957	«Շինվեր պլուս» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	4292.6	455.1	3075.7		761.8
68.	90001902	«Էլեկտրոն» ԱԿ	ք.Ստեփանակերտ	4157.8	1336.0	2590.0		231.8
69.	90019529	«Զի սթայլ» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	4140.1	314.3	3.493.9		331.9
70.	90012176	«Վարարակն» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	4080.2	763.0	3233.0		84.2
71.	90141855	«Անուշ» ՍՊԸ	գ.Թալիշ	4065.2	1213.6	2606.4		245.2
72.	90027406	«Տեխնո ՎՆ Սերվիս» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	4033.2	25.8			4007.4
73.	90001559	«Նորայր եւ Յրայր եղբայրներ» ԱԿ	ք.Ստեփանակերտ	4024.7	406.5			3.618.2
74.	90022299	«Յրայր» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	4000.0				4.000.0
75.	90000143	«Արդյունաբերական շինարարական կոմբինատ թիվ 1» ԲԲԸ	գ.Բերքաձոր	3938.7	1.234.7	2.403.8		300.2
76.	90212476	«Ստարտ պլուս» ՍՊԸ	գ.Սարգսաշեն	3922.9	1372.0	800.0	316.6	1434.3
77.	90025297	«Արեգակ» ունիվերսալ վարկային կազմակերպություն Ստեփ. մաս.	ք.Ստեփանակերտ	3914.8	524.8	3.200.0		190.0
78.	90001945	«Կոնտրակտ» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	3902.3	453.0	3365.0		84.3
79.	90019476	«Տեխնոլոգիաներ» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	3900.2	1.273.1	2.491.6		135.5
80.	90012064	«Բարի Հոգի» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	3900.0	200.0			3.700.0
81.	90002519	«Միրաժ» ԱԿ	ք.Ստեփանակերտ	3821.1	639.0	427.2		2.754.9
82.	90001833	«Արցախփոստ» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	3776.6	876.2	2.049.9		850.5
83.	90000023	«Հաղթանակ» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	3751.5	121.7			3.629.8
84.	90026334	«Մեծ - Անիվ» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	3743.0	181.0	2220.0	100.0	1242.0
85.	90010884	«Էլիտա 1» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	3711.7	1395.1	2316.6		
86.	90003237	«Բերդ» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	3586.7	3274.9			311.8
87.	90020535	«Աշոտ երկաթ» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	3529.9	1064.4	1382.6		1082.9
88.	90003477	«Վերածնունդ» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	3500.0		3500.0		
89.	90016246	«Գոհարիկ» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	3488.2	17.4			3470.8
90.	90212356	«Յայր և որդի Մուսայեյաններ» ՍՊԸ	ք.Մարտունի	3427.9	426.8	2916.4		84.7
91.	90023765	«Սետր գրուպ» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	3349.0	24.0			3.325.0
92.	90010111	«Ավտոբազա» ՓԲԸ	ք.Ստեփանակերտ	3315.5	708.4	45.3	1.723.3	838.5
93.	90014336	«Պրոգրես» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	3213.9	2403.7	788.3		21.9
94.	90015613	«Վահան» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	3195.0	637.5	2502.5		55.0
95.	90025659	«Ատրիում» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	3173.3	2032.3			1141.0
96.	90073734	«Բայազետ» ՍՊԸ	գ.Նորագյուղ	3098.9	700.0	2112.7		286.2
97.	90073649	«Միլան Էլ. Ջի.» ՍՊԸ	ք.Ասկերան	3024.8	23.8			3.001.0
98.	90021296	«Արմեն - Արթուր» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	3000.0		3000.0		
99.	90024467	«ԱԻՍ» ՍՊԸ	ք.Ստեփանակերտ	2991.0	586.2	2320.0		84.8
100.	90002269	«Վողկանալպրոեկտ» ԱԿ	ք.Ստեփանակերտ	2957.2	1482.2	1424.3		50.7

ԱՐՑԱԽԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ «ՅԻՄՆԱԿԱՆ ՄԵՏԱՂԻ» ՀՍԿԱՆ. ԳԼԽԱՎՈՐ ՀԱՐԿԱՏՈՒ

# «ԲԵՅԳ ՄԵԹՁԼՍ»-Ը

ՆԱԵՎ ԲԱՐԵԳՈՐԾ Է



**Ո**չ միայն ԼՂՀ լեռնահանքարտադրության ոլորտի միակ և խոշոր ընկերություն, այլ նաև՝ թիվ 1 հարկատու: «Բեյգ Մեթըլս»-ը շուրջ 8 տարի առաջ բավականին վստահ բախեց դարաբաղյան բիզնես-աշխարհի դռները՝ միանգամից և բավականին կայուն գրավելով խոշոր հարկատուների ցանկում պատվավոր տեղը: Առաջին հարկատուն լինելուն «Բեյգ Մեթըլս»-ին չիսանգարեց անգամ ֆինանսատնտեսական ճգնաժամը, իսկ հայտնի է, որ առաջին և ամենալուրջ հարվածը հասցվեց հենց այս ոլորտին: Այնպես որ, խոշորագույն այս ընկերությունը շարունակում է պահպանել առաջատարի դիրքերը:

«Բեյգ Մեթըլս»-ի մասին խոսելով՝ Ղարաբաղում թեթևացած շունչ են քաշում. ընկերության ստեղծումն ու հետագա գործունեությունը յուրօրինակ փրկություն է հազարավոր բնակիչների համար՝ ինչպես աշխատատեղերի, այնպես էլ ենթակառուցվածքների ստեղծման առումով: Այդ ամենից բացի, «Բեյգ Մեթըլս»-ը նաև մի շարք բարեգործական ծրագրերով է հայտնի:

*«Արցախի ընդերքն այսօր թույլ է տալիս շատ հստակ նայել ապագային, այնպես որ, «Բեյգ Մեթըլս»-ն Արցախում դեռ երկար կաշխատի»*

*վստահ է «Բեյգ Մեթըլս» ՓԲԸ գլխավոր տնօրեն՝ Արթուր Մկրտումյանը*



**- Պարոն Սկրտումյան, ի՞նչ ցուցանիշներ է արձանագրել ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում ԼՂՀ-ում գործող խոշորագույն ընկերությունը:**

- Ինչպես գիտեք, տնտեսական ճգնաժամի ազդեցությունն առաջինը զգացին լեռնահանքային ոլորտի կազմակերպությունները, որոնցից շատերը ժամանակավորապես դադարեցրին իրենց գործունեությունը: Պետք է ասեմ, որ այդ պայմաններում մեզ հաջողվեց ոչ միայն չկրճատել գործունեության ծավալները, այլև ավարտին հասցնել հարստացուցիչ ֆաբրիկայի վերագինման հետ կապված ներդրումային ծրագիրը, միաժամանակ հանքաքարի վերամշակման ծավալներն ու մետաղների կորզման աստիճանը հասցնել առավելագույնի: Բացի այդ, արտադրական ծախսերի կառավարման արդյունավետության բարձրացման շնորհիվ կարողացանք հասնել ծախսերի էական կրճատման: Արդյունքում ճգնաժամային համարվող 2009 թվականին արձանագրեցինք բավականին հաջող տնտեսական ցուցանիշներ: Չատկանշական է, որ նշված տարում առավելագույն մակարդակի են հասել կարևորագույն այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են՝ ընկերության արտադրանքի իրացումից հասույթը (շուրջ 13,5մլրդ), մեկ աշխատողի հաշվով միջին աշխատավարձը (177 հազ. դրամ), հաշվարկված հարկերն ու այլ պարտադիր վճարները (3,5մլրդ դրամ): Նախաճգնաժամային լավագույն տարում այդ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 12,3մլրդ, 172 հազար և 2,6մլրդ դրամ:

Ճգնաժամի պատճառով ընկերությունը բավականին վնասներ է կրել, սակայն դա չի խանգարել նրան պահպանել արտադրության ծավալները: Այսօր էլ «Բեյզ Մեթըլս»-ը շարունակում է նոր ծրագրեր մշակել ու գործնական քայլեր ձեռնարկել՝ դրանք կյանքի կոչելու համար:

**- Լինել խոշոր, ավելին՝ թիվ մեկ հարկատու. ի՞նչ է Ձեզ համար այդ կարգավիճակը:**

- Նախ և առաջ դա մեծ պատասխանատվություն է և գիտակցում այն բանի, որ ընկերության գործունեությունը կարևորվում է ոչ միայն աշխատակիցների և բաժնետերերի, այլև՝ հասարակության և հատկապես՝ սոցիալական որոշակի ուղղվածություն ունեցող շերտերի համար: Բնականաբար, այս գործոնները մեզ համար է՛լ ավելի են կարևորվում, երբ դիտարկվում են դարաբաղյան տնտեսության ու հասարակության տեսանկյունից:

**- Ձեր կազմակերպությունը Արցախում բարեգործական մեծածավալ ծրագրերի հեղինակ է: Ինչպիսի՞ զգացումներ եք ունենում ամեն անգամ՝ նոր ծրագիր նախաձեռնելիս և, իհարկե, իրագործելիս:**

- «Բեյզ Մեթըլս» ընկերության և բաժնետերերի բարեգործական գործունեության հիմնական սկզբունքը աշխատատեղերի ստեղծումն է. մեզ համար չափազանց կարևոր է արտադրության մեջ ընդգրկված մեր գործընկերների ու նրանց ընտանիքների բարօրության ապահովումը: Մենք այդ ուղղությամբ ևս գործուն քայլեր ենք կատարում. անընդհատ նախատեսում և իրականացնում ենք բազմաթիվ բարեգործական ծրագրեր, որոնց ծախսային հանրագումարը միլիոնավոր դոլարների է հասնում: Դրանք ուղղված են Ղարաբաղի համար կարևոր նշանակություն ունեցող ոլորտներին: Եվ միայն այն փաստը, որ մեր ընկերությունը ևս այս կամ այն չափով իր մասնակցությունն է ունենում մեր

Արցախի տնտեսության զարգացման գործում, արդեն իսկ ոգևորող է: Մենք հրաշալի գիտակցում ենք, որ մեր կողմից վճարվող հարկերը Ղարաբաղի պետբյուջե են գնում, որ այդ գումարներն ուղղվում են բնակչության համար կարևոր խնդիրների լուծմանը... Մեզ համար դա է առաջնային: Իսկ երբ մեր



**Մենք հրաշալի գիտակցում ենք, որ մեր կողմից վճարվող հարկերը Ղարաբաղի պետբյուջե են գնում, որ այդ գումարներն ուղղվում են բնակչության համար կարևոր խնդիրների լուծմանը...**

ընկերության ոչ միայն բաժնետերերը, այլ նաև յուրաքանչյուր աշխատակից այս կամ այն ծրագրի իրագործման արդյունքում զգում են, որ պահանջված և գնահատված են ժողովրդի ու պետության կողմից, ապա պարտավորվածության զգացումը կրկնապատկվում է:

**- Որպես գործարար, ի՞նչ կարծիք ունեք դարաբաղյան բիզնես-միջավայրի մասին:**

- Պետք է ասեմ, որ դարաբաղյան գործարար միջավայրը շահեկանորեն առանձնանում է հատկապես պետական ինս-



տիտուտների կողմից դրսևորվող բարենպաստ բարոյահոգեբանական և գործնական միջավայրի ստեղծմամբ ու հետևողականությամբ: Սա հատկապես կարևորվում է մեծածավալ ներդրումային ծրագրերի իրականացման դեպքում, երբ մշտապես կարիք է լինում հավասարակշռել մի շարք ռիսկային գործոններն ակնկալվող արդյունքների հետ: Իմ դիտարկմամբ, տնտեսության ոլորտում յուրաքանչյուր ներդրումային նախագիծ թե՛ գործարար և թե՛ պետական շրջանակների կողմից պետք է նույնանման ընկալում ունենա և իրականացման համար պետք է երկկողմանի ջանք ու եռանդ պահանջի: Այս տեսակետից կարող եմ նշել, որ դարաբաղյան գործարար դաշտն արդեն իսկ լուրջ հաջողություններ է գրանցել, և շարունակվում են համակարգված գործ-

ղությունները հետագա բարելավման ուղղությամբ:

**- Ունե՞ք այնպիսի սկզբունքներ, որոնք բիզնեսի մեջ երբեք չեք խախտում:**

- Սկզբունքներն ավելի քան պարզ են. նախ՝ թափանցիկ գործունեություն, իմ համոզմամբ, դա է բիզնեսի հիմնական ուժը: Եական տեղ եմ հատկացնում արդարացի մոտեցումներին գործարար հարաբերությունների և գործողությունների մեջ և, իհարկե, հետևողականությանը:

**- Ձեր դիտարկմամբ, առաջնահերթ ի՞նչ խնդիրներ կան հարկային համակարգում, որոնք հրատապ լուծում են պահանջում:**

- Միանշանակ կարող եմ ասել, որ պետության կողմից վարվող հարկային քաղաքականությունը նպաստավոր է

բիզնեսի համար, «Բեյզ Մեթըլս»-ը դա զգացել է այս տարիների ընթացքում: Իսկ դա շատ կարևոր է, քանի որ Արցախում լրացուցիչ ներդրումներ կատարելու նոր խթան է հանդիսանում: Իսկ որպեսզի այդ քաղաքականությունը լինի ավելի արդյունավետ, կարծում եմ, որ անհրաժեշտ է ձգտել և հասնել նրան,

**Պետության կողմից վարվող հարկային քաղաքականությունը նպաստավոր է բիզնեսի համար, «Բեյզ Մեթըլս»-ը դա զգացել է այս տարիների ընթացքում: Իսկ դա շատ կարևոր է, քանի որ Արցախում լրացուցիչ ներդրումներ կատարելու նոր խթան է հանդիսանում:**



որ սահմանված հարկային կանոնները լինեն հստակ ձևակերպված և բացառեն երկիմաստ մեկնաբանության հնարավորությունները, ինչից կշահի և՛ բարեխիղճ հարկատուն, ում համար թափանցիկ գործունեությունը կարևորագույն չափանիշ է, և՛ պետությունն ու հասարակությունը:

**- Ձեր գործունեության շրջանակներն այլ ոլորտներում ընդլայնելու հեռանկարային ծրագրեր ունե՞ք:**

- Ընկերությունը հիմնականում զբաղված է լեռնային արտադրության ոլորտում և, բնականաբար, մեր բոլոր՝ այդ թվում և զարգացման ծրագրերը պայմանավորված են այս ոլորտով: Կոնկրետ լեռնային արտադրությունից բացի, մենք իրականացնում ենք նաև մեծածավալ երկրաբանահետախուզական աշ-

*Արցախի տնտեսության պիոներ. տեղի բնակիչները հաճախ հենց այսպես էլ անվանում են «Բեյզ Մեթալս»-ը: Իսկ պիոներ ասելով՝ միշտ հասկանում ենք նախ՝ պարտաճանաչություն:*

*Այդ հատկանիշը ընկերության մոտ դրսևորվում է բոլոր հարցերում. առաջինն է՝ որպես հարկատու և դարաբաղյան տնտեսության առաջին խոշոր ընկերությունն է, որը մի քանի տարի առաջ ապահովում էր ԼՂՀ բյուջեի հսկայական մասը: Այսինքն՝ Ղարաբաղի տնտեսության զարգացումը պայմանավորվում է նաև այս ընկերությամբ, որի շնորհիվ իրականություն են դարձել գյուղատնտեսության զարգացմանը նպատակաուղղված մի շարք ծրագրեր:*

խատանքներ, որոնց հիմնական նպատակն է առաջիկա տարիներին հայտնաբերել, ուսումնասիրել և շահագործման հանձնել ևս մի քանի մետաղական հանքավայրեր: Այս ուղղությամբ արդեն իսկ կան որոշակի հաջողություններ և հուսով եմ, որ մեր ակտիվ գործունեութ-

յունը դարաբաղյան տնտեսության լեռնային ոլորտում շարունակական կլինի: Արցախի ընդերքն այսօր թույլ է տալիս շատ հստակ նայել ապագային, այնպես որ, «Բեյզ Մեթալս»-ն այստեղ դեռ երկար կաշխատի: 

*Արհեստավարժություն  
Անձնական պատասխանատվություն  
Տեղեկատվական անվտանգություն  
Թիմային աշխատանք, այլ կերպ ասած՝*

# ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐԸ ՄԻԱՄԻՆ

Գործի վերածվող արժեքներն է հիշեցնում դրական արդյունքներ արձանագրած «Արցախբանկ» ՓԲԸ վարչության նախագահ՝ Կամո Ներսիսյանը:





«Արցախբանկ»-ի բանկային հաշիվների քանակը 2009թ.-ին աճել է **68.6%**-ով

- Պարոն Ներսիսյան, ինչպե՞ս է Ձեր ղեկավարած կառույցն ամփոփել 2009 թվականը: Պատրաստ եր, արդյոք,

«Արցախբանկ»-ը համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամին:

- 2008թ. երկրորդ կեսից սկսած՝ համաշխարհային ֆինանսական ճգնաժամի հետևանքները զգաց նաև ԼՂՀ տնտեսությունը, ինչն իր հերթին, բնականաբար, ազդեց բանկային համակարգի գործունեության և ցուցանիշների վրա:

յան հիմքում մեկ հիմնական նպատակ էնք դնում՝ մեր հաճախորդները պետք է բարձրակարգ և որակյալ սպասարկում ստանան:

- Փաստորեն, Ձեզ համար բանկ-հասարակություն փոխհարաբերություններն են առաջին տեղում, նաև՝ փոխվստահության դաշտի ձևավորումը: Այդ գոր-

մենք միշտ ձգտում ենք լինել առաջատարների շարքերում. դա է մեր գործելաոճը: Ցանկացած նորամուծության

վաբանական անձանցը՝ 6.7%-ով. դա այն դեպքում, երբ, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների համաձայն՝ 2009թ. արդյունքներով ՀՀ բանկային համակարգում հաճախորդների բազան աճել է ընդամենը 11.9%-ով, իսկ իրավաբանական անձանց թվաքանակը՝ 16.0%-ով, ֆիզիկական անձանցը՝ 11.7%-ով:

Բացի այդ, «Արցախբանկ»-ի բանկային հաշիվների քանակը 2009թ.-ին աճել է 68.6%-ով. իրավաբանական անձանց գծով աճը կազմել է 11.6%, ֆիզիկական անձանց գծով՝ 74.1%, սա էլ այն դեպքում, երբ ՀՀ բանկային համակարգում բանկային հաշիվների քանակական աճը կազմել է ընդամենը 11.3%,

# ՆՎԱՃԵԼՈՒ ԱՐՎԵՍՏԸ

ճգնաժամի հետևանքները զգացինք հատկապես 2009թ. չորրորդ եռամսյակի ընթացքում:

Բայց, չնայած դրան, 2009թ.-ին «Արցախբանկ»-ին հաջողվեց գործել բնականոն հունով և նույնիսկ ապահովել 1,116 մլրդ դրամի շահույթ հարկումից հետո:

2009թ. արդյունքներով ՀՀ բանկային համակարգում «Արցախբանկ»-ն առաջինն էր՝ կապիտալի և չորրորդը՝ ակտիվների շահութաբերությամբ:

Նախորդ տարվա համեմատությամբ այս տարի մեր բանկի շահույթն աճել է 44.5%-ով, ընդ որում՝ զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտներն աճել են 31.3%-ով, իսկ գործառնական եկամուտները՝ 95.2%-ով: Եթե 2008թ.-ին շահութահարկի գծով ծախսերը կազմել էին ընդամենը 178.6 մլն դրամ, ապա ընթացիկ տարում այդ ցուցանիշը հասել է արդեն 295.7 մլն դրամի:

- Ինչու եք «Արցախբանկ»-ի գործունեությանը, կարելի է նկատել, որ բանկի ղեկավարությունն անընդհատ նոր մոտեցումներ է կիրառում, որոնք շահավետ կլինեն հաճախորդների համար:

- Ճիշտ էք նկատել, «Արցախբանկ»-ը միշտ էլ բաց է նորամուծությունների համար և այս առումով տարածաշրջանում

*Հանդիսանալով տարբեր ոլորտներում իրականացվող բազմաթիվ ծրագրերի հովանավոր՝ նաև իր բարեգործական գործունեությամբ «Արցախբանկ»-ը նպաստում է ԼՂՀ սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծմանը,*

*մասնավորապես՝ ֆինանսական օժանդակություն է ցուցաբերում տարածաշրջանում կրթության, մշակույթի, սպորտի և առողջապահության աջակցմանն ուղղված նպատակային ծրագրերի իրագործմանը:*

ծելաոճը որքանո՞վ է նպաստում բանկի կողմից մատուցվող ծառայություններից օգտվողների շրջանակի ընդլայնմանը:

իրավաբանական անձանց բանկային հաշիվների գծով՝ 11.0%, ֆիզիկական անձանց գծով՝ 11.4%:

- «Արցախբանկ»-ը շարունակում է իր դիրքերն ամրապնդել ֆինանսական շուկայում: Այդ է վկայում օրեցօր մեծացող հաճախորդների բազան: «Արցախբանկ»-ի հաճախորդների թիվը 2009թ. աճել է 1.8 անգամ՝ տարեվերջին հասնելով շուրջ 30 հազարի: Ընդ որում, ֆիզիկական անձանց թիվն աճել է 73%-ով, իրա-

Այս տարի բանկի շահույթն աճել է **44.5%**-ով

- Բանկը քանի՞ մասնաճյուղ ունի ԼՂՀ-ում, հիմնականում նկատի ունենք այն հանգամանքը, թե Արցախի բոլո՞ր շրջաններն եք սպասարկում:

- ԼՂՀ տարածքում գործում են «Արցախբանկ»-ի 11 մասնաճյուղեր, որոնցից 6-ը՝ Շուշիի, Մարտակերտի, Հադրութի, Ասկերանի, Մարտունիի, Զաշաթաղի շրջաններում, մնացածը՝ Ստեփանակերտում:



**- Փաստորեն, Դուք ՀՀ բանկային համակարգում միակ բանկն եք, որի գլխամասը գտնվում է Ղարաբաղում: Այդ հանգամանքն ինչպե՞ս է անդրադառնում Ձեր գործունեության վրա:**

- Մեր բանկի խոշոր կառուցվածքային միավորներից մեկի՝ ՀՀ տարածաշրջանային կառավարման, վերահսկման և զարգացման դեպարտամենտի նստավայրը Երևանում է, «Արցախբանկ»-ի 17 մասնաճյուղերից 6-ը նույնպես գործում են Երևանում: Հանդիսանալով միակ հայկական բանկը, որը լայնածավալ գործունեություն է ծավալում ԼՂՀ-ում՝ «Արցախբանկ»-ը նշանակալի դերակատարություն է ունենում ԼՂՀ տնտեսության ֆինանսական միջնորդության աճի գործում: «Արցախբանկ»-ը սպասարկում է ԼՂՀ պետական բյուջեի, կառավարության և պետական այլ մարմինների հաշիվները: Մեր բանկը ներգ-

րավված է տնտեսական ու պետական զարգացման մի շարք ծրագրերում՝ աջակցելով դրանց իրականացմանը:

**Շուրջ երեք տարի է, ինչ բանկը համագործակցում է նաև Արցախի ներդրումային հիմնադրամի հետ, որի շրջանակներում տրամադրված վարկերի մնացորդները 2009թ.-ի ավարտին ունեցել են հետևյալ պատկերը՝**

- հիփոթեքային վարկեր՝ 796.5 մլն դրամ և 2269.4 մլն դոլար,
- բիզնես վարկեր՝ 1790.0 մլն դրամ:

2009թ. մեր բանկը սկսել է համագործակցել մի շարք հիմնադրամների և կառույցների հետ, մասնավորապես՝ ԼՂՀ

գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի, որի շրջանակներում տրամադրված վարկերի մնացորդները 2009-ի տարեվերջին կազմել են 3023.7 հազար դրամ, ինչպես նաև՝ Գերմանահայկական հիմնադրամի հետ, որի շրջանակներում տրամադրված վարկերի մնացորդներն էլ նույն ժամանակահատվածում կազմել են 1185.6 մլն դրամ:

«Արցախբանկ»-ի վարկային ներդրումները 2009թ. վերջին (առանց միջբանկային վարկերի) կազմել են 30816.3 մլն դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 34.6%-ով:

«Արցախբանկ» ՓԲԸ-ն առաջատար դիրք է զբաղեցնում նաև ԼՂՀ պլաստիկ քարտերի շուկայում: Նախորդ տարեվերջին թողարկված քարտերի քանակը հասել է շուրջ 11 հազարի, այսինքն՝



**2004թ.-ից «Արցախբանկ»-ը հանդիսանում է MasterCard International միջազգային վճարային համակարգի անդամ, որը ներկայացնում է այնպիսի հայտնի վճարային քարտերի բրենդներ, ինչպիսիք են՝ Cirrus/Maestro և MasterCard-ը՝ սպասարկվող աշխարհի ավելի քան 210 երկրներում:**

**Բանկը հանդիսանում է ArCa ազգային վճարային համակարգի հիմնադիրներից մեկը: 2000թ.-ին դարձել է «Արմենիան Քարդ» ընկերության բաժնետեր և լիիրավ անդամ:**



աճել է 2.3 անգամ: Բանկի պլաստիկ քարտերով գործառնությունների ծավալներն էլ 2009թ. կազմել են 8904.4 մլն դրամ՝ 2008թ. համեմատ աճելով 3.2 անգամ:

2004թ.-ից «Արցախբանկ»-ը հանդիսանում է MasterCard International միջազգային վճարային համակարգի անդամ, որը ներկայացնում է այնպիսի հայտնի վճարային քարտերի բրենդներ, ինչպիսիք են՝ Cirrus/Maestro և MasterCard-ը՝ սպասարկվող աշխարհի ավելի քան 210 երկրներում:

Բանկը հանդիսանում է ArCa ազգային վճարային համակարգի հիմնադիրներից մեկը: 2000թ.-ին դարձել է «Արմենիան Քարդ» ընկերության բաժնետեր և լիիրավ անդամ:

**- Ի՞նչ նոր քայլեր եք մտադիր ձեռնարկել առաջիկայում. հաճախորդներն անընդհատ նոր ծառայությունների մատուցում են ակնկալում:**

- Իհարկե, դա մեզ մոտ ամենօրյա գործընթաց է: «Արցախբանկ»-ը նախատեսում է առաջիկա մեկ տարվա

ընթացքում մի շարք նոր ծառայություններ, տեխնոլոգիաներ և համակարգեր ներկայացնել սպառողներին: Դրանք են՝ բանկ-հաճախորդ համակարգի ներդրումը և սպասարկումը, պլաստիկ քարտերով ավտոմատ գանձման մեքենաների միջոցով կոմունալ վճարումների ընդունումը, ֆինանսական վարձակալության (լիզինգ) իրականացումը, դրամական փոխանցումների նոր հա-

**Կերի տոկոսադրույքների նվազեցում կանխատեսվում է:**

- Հաշվի առնելով ՀՀ ֆինանսաբանկային համակարգում տարվող քաղաքականությունը՝ կարծում եմ, որ նախորդ տարվա համեմատ վարկերի տոկոսադրույքների նվազում չի լինելու:

Սակայն, ՀՀ կենտրոնական բանկի և կառավարության միջնորդությամբ

**2008թ.-ից «Արցախբանկ»-ը ԼՂՀ կառավարության հետ իրականացնում է երկրի տնտեսության զարգացմանն ու հիփոթեքային վարկավորման ակտիվացմանն ուղղված նպատակային ծրագրեր:**

մակարգերի կիրառումը, նոր վարկատեսակների՝ բիզնես տարածքների ձեռքբերման և վերանորոգման նպատակով վարկերի, էքսպրես վարկերի /մեկ օրվա ընթացքում տրամադրվող/ տրամադրումը և այլն:

**- Հաճախորդին հետաքրքրող թերևս ամենակարևոր հարցը՝ բանկային վար-**

գերմանա-հայկական հիփոթեքային ծրագրերի, միջազգային ֆինանսական կառույցներից և ՌԴ կառավարությունից ստացված վարկային միջոցների հաշվին վարկավորման շարունակման և ակտիվացման դեպքում հնարավոր է վարկավորման պայմանների բարելավում:

Երբևէ շնչե՞լ եք Արցախի՝ աշխարհում ոչնչի հետ չհամեմատվող օդը, տեսե՞լ եք մեր «Բարոյին ու դեղոյին», իսկ Տնջրի՞ն՝ 2000 -ամյա հսկա չինարի ծառը, որի փչակի մեջ 100-ից ավելի մարդ է տեղավորվում: Նույնիսկ Շուշիում, լեռների գանձ՝ Գանձասարում չե՞ք եղել... Ուրեմն դուք դեռ ոչինչ չեք տեսել...

# ԱՐՑԱԽՈՒՄ

## ՈՒՐԵՄՆ ԴԵՌ ՈՉԻՆՉ

«**Ս**եր Արցախն աշխարհին պետք է ներկայանա իր ողջ հմայքով ու բոլոր գանձերով, անփոխարինելի բնության հրաշքներով ու հյուրընկալ մարդկանցով», - հայկական երկրորդ պետության իշխանության այս վճռականության արդյունքն արդեն իսկ ակնհայտ է. Ղարաբաղ այցելող զբոսաշրջիկների թիվն ամեն տարի աճում է շուրջ 40 տոկոսով: Իսկ 2009թ. -ին նույնիսկ ճգնաժամն անգոր գտնվեց հազարավոր արտասահմանցիների դեմ, ովքեր հաճույքով հրաժարվեցին իրենց խնայողություններից՝ գերադասելով դրանք ծախսել հենց Արցախ աշխարհում: Իսկ վիճակագրական տվյալները փաստում են, որ անցած տարի դեպի Ղարաբաղ են ուղևորվել երկու անգամ ավելի զբոսաշրջիկներ, քան 2008-ին: Բացի այդ, նաև զբոսաշրջիկների աշխարհագրությունն է ընդլայնվում. անցած տարի Ղարաբաղի ճամփան են բռնել նաև Մոզամբիկի, Մավրիտանիայի, Վենեսուելայի, Գայանայի և այլ պետությունների քաղաքացիները՝ միանալով Արցախի մշտական հյուրերին՝ ՌԴ-ի, Թուրքմենստանի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի, Իրանի, Ճապոնիայի, Գերմանիայի, ՅուՆԱԵՍԿՈ-ի, Զուանդիայի, Շվեյցարիայի, Կանադայի, Իտալիայի, Լեհաստանի, ՅուՆԱԵՍԿՈ-ի, ԱՊՅ և այլ երկրների զբոսաշրջիկներին: Այստեղ գոնե մեկ անգամ ոտք դնողը միանգամից որոշում է՝ նորից է գալու:

# ՉԵՔ ԵՂԵԼ...

## ՉԵՔ ՏԵՍԵԼ

**ՊԱՏՄԱԿԱՆ ԱՐՑԱՆՈՒՄ  
ԲԱՅԱՅԱՅՏՈՒՄՆԵՐՆ  
ԱՆՎԵՐՋ ԵՆ...**

Այն, որ Արցախի նկատմամբ արտասահմանցիների հետաքրքրությունը գնալով մեծանում է, դա փաստ է, որը նաև թվերով է արտահայտվում: Դրան էապես նպաստում են նաև միջազգային ՉԼՄ-ները, որոնք ժամանակ առ ժամանակ անդրադառնում են դարաբաղյան հիմնահարցին, Արցախի պատմությանը, երկրում տեղի ունեցող զարգացումներին ու բարեփոխումներին: Իսկ դա էլ նշանակում է, որ այս ուղղությամբ տարվող պետական քաղաքականությունն արդյունավետ է, քանի որ հայտնի է՝ արտասահմանցիները չափազանց զգուշավոր են և, որպես կանոն, շրջվում են դեպի ժողովրդավարության ուղին բռնած պետությունները:

ԼՂՀ-ում տուրիզմի զարգացումը հռչակված է որպես տնտեսության զարգացման կարևոր և հեռանկարային ճյուղ, որը խրախուսվում է իշխանությունների կողմից: Ոլորտի կարգավորմամբ և հստակ քաղաքականության իրականացմամբ զբաղվում է առանձին կա-

ռույց՝ ԼՂՀ կառավարության առընթեր զբոսաշրջային վարչությունը:

2009-ի տվյալներն ամփոփելիս՝ մասնագետներն ու վերլուծաբանները զարմանքով արձանագրեցին՝ Արցախում միջազգային զբոսաշրջային այցելությունների անկում չի արձանագրվել, և դա այն դեպքում, երբ այս ոլորտի վրա ճգնաժամը բացասաբար է անդրադարձել ամբողջ աշխարհում: Վերլուծություններում դարաբաղյան դրական արդյունքը, միանշանակ, պայմանավորվում է վարվող պետական քաղաքականությամբ և պետություն-մասնավոր հատված համագործակցությամբ:

2009թ.-ին ԼՂՀ վիզային ռեժիմով արտասահմանյան երկրներից ներգնա զբոսաշրջային այցելությունների թիվը գերազանցել է 5.500-ը՝ 2008-ի համեմատ աճելով 2.6%-ով: Ընդհանուր առմամբ, հաշվի առնելով նաև ԼՂՀ մուտքի վիզայի կարիքը չունեցող զբոսաշրջիկների քանակը, այցելությունների թիվը

2009-ին աճել է շուրջ 11%-ով: Այս հաշվարկներում ներառված չեն Ռուսաստանից և Հայաստանից առանց զբոսաշրջային ընկերությունների միջնորդության Ղարաբաղ այցելողները:

Արցախի զբոսաշրջային հնարավորություններին նախ պետք է Հայաստանում լիարժեք տիրապետեն՝ այցելելով Ղարաբաղ, և առաջին հերթին՝ պետական պաշտոնյաները: Սա ՀՀ վարչապետի հիշեցումն է, որ հնչել է անցած տարի: Իր կոչով վարչապետը և՛ զբոսաշրջային գործակալություններին, և՛ պետական կառույցների ներկայացուցիչներին հորդորեց հանգստի տարբերակ փնտրելիս կանգ առնել մեր Արցախի վրա՝ օրինակ ծառայելով մյուսներին:

Չուգահեռ Արցախում ևս համապատասխան քայլեր ձեռնարկվեցին՝ այդ նախաձեռնության շրջանակներում զբոսաշրջային փաթեթների ձևավորման ուղղությամբ: Խնդիր էր դրված կազմել բովանդակալից, բայց և՛ մատչելի փաթեթներ: Ոլորտի պատասխանատուները վստահեցնում են՝ դա հաջողվել է՝ վարչապետի կոչն իր արդյունքներն ունեցել է: Արցախում իրենց հանգիստն

**Ղարաբաղ այցելող  
զբոսաշրջիկների թիվն ամեն  
տարի աճում է շուրջ  
40 տոկոսով:**

«Իմ ամեն այցելությամբ ես ավելի ու ավելի եմ ոգեշնչվում այս հրաշալի երկրով. Արցախում դրական փոփոխություններն անվերջ են. ամեն անգամ այն անճանաչելիորեն փոխվում է՝ նոր կառույցներ, հսկայածավալ շինարարություն ... Այստեղի բնակիչներից յուրաքանչյուրը հերոսությամբ ու քաջությամբ է օժտված: Ես ամենուր պատմում եմ Ղարաբաղի մասին այնպես, որ մյուսներն էլ են այստեղ գալու ցանկություն հայտնում: Փորձված է՝ ով գալիս է Արցախ, շփվում նրա բնակիչների հետ, անկարագրելի համակրանք է տածում նրանցից յուրաքանչյուրի նկատմամբ, ցանկանում ինչ-որ կերպ աջակցել այս փոքրիկ, բայց շատ մեծ երկրին»...

Քերոլայն Քոքս



«Տաք Ջուր»

են անցկացրել հայաստանյան մի շարք աշխատանքային կոլեկտիվներ: Հանգստի ավարտին բոլորը միակաժիք էին՝ Արցախի զբոսաշրջային հնարավորություններն անսպառ են:


Ղարաբաղյան բոլոր շրջաններում ձեզ դիմավորում են սառն քնակալ ռեսուրսները, որոնք չեն կարող անտարբեր թողնել ոչ մի այցելուի:

Օրինակ, Շահումյանի շրջանի Չուար համայնքի տարածքում գտնվող «Տաք Ջուր»-ն ու Նրա շրջակայքը՝ 350մ շառավղով, ԼՂՀ կառավարության 2009թ.-ի որոշմամբ ճանաչվել է որպես զբոսաշրջային տարածք:

Հադրութի շրջան՝ պատմական Դիզակ գավառ այցելելիս, ծովի մակերևույթից տարբեր բարձրությունների վրա գտնվող հազվագյուտ հուշարձաններ կտեսնեք: Իսկ ուղևորվելով դեպի Դիզափայտի Կատարովանք, կտեսնեք Արջաղբյուրը՝ հենց դրա կողքով եք անցնելու, Իշխանագետի Հալտրի կամուրջը, Կավաքավանքը, Ամարասի վանքը, որտեղ Մաշտոցը բացեց իր առաջին դպրոցներից մեկը, 13-րդ դարի Գտջավանքը: Ոչ մի դեպքում բաց մի թողեք մեղիքանիստ Տող գյուղ այցելելու հնարավորությունը. հենց այդտեղ է պահպանվում մեղիքների ապարանքը: Միայն այդտեղ դուք կարող եք ոչ միայն տեսնել, այլև սառն լինել աշխարհում մարդու հնագույն կացարաններից մեկում՝ Ազոխի քարանձավում: Բայց դա էլ վերջը չէ. ձեզ հաստատ կառաջարկեն տեսնել սառն Աբունց գյուղը և... ինչու չէ, զբաղվել սպորտային ձկնորսությամբ: Վստահեցնում ենք, առ այսօր շատ քչերին է հաջողվել անտարբեր անցնել և չօգտվել Իշխանագետի Իշխանեցիք վտակի պարզևած հնարավորությունից:

Դե իսկ մեր Տևջրիի մասին խոսք չկա. ավելի քան 2000 տարեկան հսկա չիևարի ծառը եզակի է ամբողջ աշխարհում: Այն տեսնելու համար ձեզ կուղեկցեն դեպի պատմական Արցախի Վարանդա գավառի՝ Մարտունու շրջանի Սիտորաշեն գյուղ: Միայն


Տևջրի



Վանդա



Մարտունուի եկեղեցի



Ամարաս

**2009թ.-ին նույնիսկ ճգնաժամն անզոր գտնվեց հազարավոր արտասահմանցիների դեմ, ովքեր հաճույքով հրաժարվեցին իրենց խնայողություններից՝ գերադասելով դրանք ծախսել հենց Արցախի աշխարհում:**

արցախցի չինարին կարող է ունենալ 44քմ մակերեսով փչակ, որտեղ կարող է տեղավորվել հարյուրից ավելի մարդ... Յակա ծառի սաղարթի ստվերն ավելի քան 1400քմ է: Տնջրիի բնի շրջագիծը հիմքում 27մ է, իսկ բարձրությունը՝ 54 մետրից ավելի՝ մոտ 18 հարկանի շենքի բարձրության: Սխտորաշենի չինարին իր արտասովոր չափերով գերազանցում է Էգեյան ծովի Կոս կղզու, ինչպես նաև Աշխաբադի մոտ գտնվող Փիրուզե կիրճի ծառերին:

Ոչ մի դեպքում չմերժեք զբոսաշրջային կենտրոն համարվող, արծվի բույն հիշեցնող բերդաքաղաք Շուշի այցելելու հրավերը: Ոչ մի տեղ այդպիսի լեռնային քաղաք հաստատ չեք տեսնի: Բացի այն, որ Շուշիի մաքուր օդն ուղղակի տոն կլինի ձեր թոքերի համար, այլ նաև կլիման է բավական մեղմ, չնայած

Շուշին ծովի մակերևույթից 1450-1550մ բարձրության վրա է գտնվում: Դե, պատկերացրեք, որ այդ բարձրության վրա նաև բնական հուշարձաններ կան, օրինակ, Շուշիի ձորը՝ Յունոտի կիրճը:

Ղարաբաղյան լեռների գանձի՝ Գանձասարի և Վանք գյուղի մասին հաստատ լսած կլինեք:

Մայրաքաղաք Ստեփանակերտից 45կմ հեռավորության վրա գտնվող Վանք գյուղը թավուտ անտառների գրկում է՝

լեռներով շրջապատված: Գյուղ տանող ճանապարհը ոլորապտույտ է, և յուրաքանչյուր ոլորանի վրա բացվում է իր գեղեցկությամբ նախորդին գերազանցող, Էլ ավելի հրապուրիչ տեսարան: Բնության պարզև կատարելագործել է արմատներով ու ծնունդով արցախցի, գործարար և բարեգործ Լևոն Յայրապետյանը: Նրա միջոցներով գյուղում երկու նոր հյուրանոց է կառուցվել, երկուսն էլ՝ Գանձասար տանող ճանապարհին: Խաչեն գետի ափին բարձրաևում է «Էկլեկտիկա» հյուրանոցային համալիրը, որին այցելուները, նաև տեղի բնակիչները, «Տիտանիկ» են անվանում: Սարի լանջին Էլ մյուս հյուրանոցն է՝ «Ծովին քար»-ը:

Գյուղի տարածքում, բնության գրկում, գործում են հանգստի գոտիներ: Վանք գյուղը (հիարկե, նախնառաջ՝ Գանձա-

սարի շնորհիվ) Ղարաբաղում զբոսաշրջության զարգացման կարևոր կենտրոններից է:

Գյուղի դիմացի սարին էլ հայտնի Գանձասարն է: Գյուղացիներն ասում են, որ վանքն իր անունը ստացել է այդ սարից, որի ընդերքում կան արծաթի և այլ մետաղների հանքեր: 12-13-րդ դարերում Աղվանից թեմի առաջնորդանիստն էր Գանձասարը: Արցախի թեմի առաջնորդ Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը նշում է, որ երբ 1989-ին վերաբացվեց Արցախի պատմական թեմը, առաջին գործող եկեղեցին հենց Գանձասարն էր: Գանձասարի տարածքը բազմիցս ռմբակոծվել է ադրբեջանցիների կողմից: Ռումբերն ընկել են ամենուր, բայց ոչ եկեղեցու վրա: «Աստված թույլ չէր տալիս: Կարծում եմ՝ Գանձասարն իր հրաշագործ զորությամբ պահեց թե իրեն, թե ժողովրդին: Միայն մեկ անգամ եկեղեցու կողքի շինությունը քանդվեց, որտեղից էլ 20 նոր խաչքարեր հայտնաբերեցինք: Հասկացանք, որ Աստված դուռ բացեց ու այդ խաչքարերը գերությունից ազատեց», - ասում է Պարզև Սրբազանը:

Գանձասարի բարձունքից ձեր առջև կբացվի Ղարաբաղն իր ողջ գեղեցկությամբ: Չմոռանաք այստեղ ևս լուսանկարվել. տուն վերադառնալիս Արցախում անցկացրած օրերը հաստատ հպարտությամբ եք հիշելու՝ մյուս տարի դարձյալ այստեղ վերադառնալու համար գումար կուտակելով:

**Համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 34-րդ հոդվածի, օտարերկրյա անձանց մատուցվող զբոսաշրջային ծառայությունները, ինչպես նաև զբոսաշրջային գործակալությունների կողմից մատուցվող ծառայություններն ազատվում են ավելացված արժեքի հարկից, եթե այդ ծառայությունների շրջանակներում ուղևորությունները, ճանապարհորդությունները, էքսկուրսիաները իրականացվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում:** 🇷🇵

Ազրիսի քարանձավ



Տոռի Մելիքի ապարանք



«Ես ծնվել եմ Մարտակերտի Վանք գյուղում և միշտ կարծել եմ, որ մեր լեռները ամենաբարձրն են, իսկ մարտակերտցիները՝ ամենաուժեղ ու համարձակ մարդիկ: Պատերազմի ժամանակ, սակայն, ես հասկացա, որ Ղարաբաղում ամենա-ամենան հաղորություններն են: Եվ մենք՝ բոլոր հայերս, ուղղակի պարտավոր ենք աջակցել, որպեսզի մեր հաղորությունները վերածնվի. այս շրջանն առանձնահատուկ վերաբերմունքի կարիք ունի, քանի որ Արցախի մյուս շրջաններն ավելի արագ են զարգանում: Ղարաբաղում ներդրողները գոնե ժամանակավոր պետք է մոռանան շահույթ և ռիսկ կոչվող հասկացությունների մասին: Փոխարենը առաջնահերթ պետք է լինեն բարեգործական նպատակները»:

Լևոն Հայրապետյան

«Էվելվոլտիկա» նյութալուստային համալիր



# ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱԱՆՅԵԹԵԹ ՀԱՐԿԵՐԸ

## ԱԿԱՆՋԸ ՄԵ՛ԿՆ Է ...

**ՈՒՐԵՄՆ ՀԱՐԿԵՐՆ ԷԼ ԵՆ ԿԻՍՎՈՒՄ՝ ԴԱԼԱՅ-ԼԱՍԱՅԻ ՈՃՈՎ**


**80** տարի առաջ՝ բանակի կարիքները հոգալու նպատակով, դալայ-լաման ստեղծել է Նոր՝ ականջների հարկատեսակ: Մարտի դաշտում ականջը կորցրածը... պատկերացրեք, իրեն երջանիկ էր զգում. նա իրեն հասանելիք հարկերի միայն կենս էր վճարում: Առհասարակ, Տիբեթը հայտնի է ամենաանհեթեթ հարկատեսակներով: Ինչի համար ասես, թե չեն ստիպել մարդկանց՝ դատարկել գրպանները 19-20-րդ դարերում: Հարկահավաքները չեն շրջանցել անգամ հարսանիքները, երեխաների ծնունդները: Իսկ եթե

երգել-պարելու, դիոլ նվագելու ցանկություն ունեք՝ խնդիր չկա, միայն թե բարի եղեք համապատասխան վճարումներ կատարել պետական գանձարան: Տիբեթի բնակիչների մտքով անգամ չպետք է անցներ փողոցում հանգստանալու տարբերակը... Նույնիսկ խոտերի վրա քնելուց առաջ մարդիկ պետք է նախ մտածեին, դրամապանակի պարունակությունը ստուգեին՝ կբավականացնի՞ր այն՝ պառկելու դիմաց վճարելու համար, թե ոչ...  
Ընդհանուր առմամբ, պետության օգտին Տիբեթում գանձվում էր շուրջ 1900 հարկատեսակ:



## ՍՏՎԵՐԸ ՆՈՒՅՆՊԵՍ ՀԱՐԿ Է

**Ի** սկ ահա Վենետիկում 1993թ.-ից գործում է... ստվերի հարկ: Այնպես որ, այն տնտեսվարողները, ում խանութների կամ սրճարանների ստվերն ընկնում է հողի վրա, իրենց դատում են «դժբախտ հարկատուների» շարքին:



## ԱՐՏԱՍԱՅՄԱՆՑԻՆԵՐԻ ՀԱՐԿ

**Ա**յս հարկատեսակն ինչ-որ առումով մեր ժամանակներում նույնիսկ Նորմալ երևույթ է համարվում. ժամանել էք այլ պետություն՝ բարի եղեք «վարձահատույց լինել» պետությանը: Այս մոտեցմանը շատ երկրներում կողմ են եղել մինչև 20-րդ դարը: Օրինակ, Կանադայում, մինչև 1923թ.-ը այդ հարկատեսակը գանձվում էր միայն չինացիներից, չինացիները Կանադայում՝ որքան ուզեք, բնակա-նաբար, հարկերը նույնպես: 1923-ից այդ հարկը հանվեց: բայց չկարծեք, թե կանադացիները մոռացան չինացիներին: Ամեն ինչ շատ պարզ է. պարզապես վերջիններիս մուտքն օրենքի մակարդակով արգելվեց այդ երկիր...

## ՈՐՔԱՆ ԿԱՐՃ, ԱՅՆՔԱՆ ԷԺԱՆ. ԳՐՊԱՆԻՆ ՀԱՐՄԱՐ ՇԱՆ ՀԱՓՍԵՐՆ ԵՆ

**Ե** վրոպական շատ երկրներում էլ կիրառվում է շների հարկ: Միայն թե Շվեդիայում հարկի չափը պայմանավորված է չորքոտանու հասակով, Նորվեգիայում էլ՝ երկարությամբ: Այդ պատճառով էլ Շվեդիայի բնակիչները դարձել են տաքսաների սիրահար, Նորվեգացիներն էլ հակառակը՝ երկար թաթերով՝ «կոմպակտ» շուն են ընտրում: Ավստրիական «շարիկների» տերերին էլ պարտադրում են ապահովագրել իրենց շանը: Եվ ստացվում է այնպես, որ օրենքի ընդունումից հետո ծնված յուրաքանչյուր շունիկ տե-

րերի վրա նստում է ոչ ավել, ոչ պակաս, քան 725 եվրո: Դա համարվում է որպես փոխհատուցում՝ «սև օրվա և բուժման» համար, եթե հանկարծ ինչ-որ մեկը հայտնվի «շան ատամների տակ»: Ով խուսափի վճարել սահմանված հարկը, ստիպված կլինի տուգանք վճարել՝ 3.5 հազար եվրոյի չափով:






# «ՄՈՐՈՒՔԱՎՈՐ» ԶԱՐԿԵՐ

**Ս** որուք պահելը թանկ հաճույք էր Անգլիայում 16-րդ դարում՝ Զենրի 8-րդի օրոք: Բայց հենց նա էլ հանել է այդ հարկատեսակը, երբ անձամբ է մորուք ունեցել: Պետրոս Առաջինի ուշադրությունը ևս սևեռվել էր մորուքների վրա: Զատուկ այդ նպատակով մորուքները բաժանվել են տարբեր խմբերի՝ պալատականի, առևտրականի, գյուղացու և այլն: Պալատականն իր իսկ մորուքի դիմաց պարտավոր էր վճարել տարեկան 60 ռուբլի, առևտրականը՝ 100 ռուբլի, ավելի ցածր խավի ներկայացուցիչները՝ 30 ռուբլի:

Օրինակ, գյուղացին իրավունք ուներ սեփական մորուքն անվճար «կրել» միայն իր գյուղում. դրա սահմաններից դուրս մորուքն արժենում էր մեկ կոպեկ: Մորուքավորներին ստիպում էին կրել հատուկ օձիքով հագուստ, իսկ եթե վերջիններս համարձակվում էին շրջել առանց դրա, ապա տուգանքն անխուսափելի էր: Դաժան տարբերակ էր գտնվել նաև անապահովների համար. ով ի վիճակի չէր պահանջվող վճարումը կատարել, ապա գումարը վաստակում էր՝ տաժանավայրում աշխատելով...



## ԱՊՐԵՆՈՒ ԻՐԱԿԱՆ ԳԻՆԸ...

**Ս** ա բոլոր հարկահավաքների կապույտ երազանքն է՝ հարկեր գանձել ամբողջ բնակչությանից՝ անկախ նրանց շահույթից, տարիքից և անգամ գործունեության բացակայությունից: Անգլիայի ղեկավարների մտահղացումն էր՝ մարդիկ պետք է հարկ վճարեն միայն նրա համար, որ... ապրում են, այսինքն՝ բոլորը հարկատու էին: Այդ «երջանկությունը» անգլիացիների գլխին ընկել էր 14 դարում և ավարտվել մեծածավալ ցույցերով:



## ՆՈՐԵՆՅԱՆ ԳԼՈՒԽԿՈՏՐՈՒԿԸ

**Դ** ուք կարծում եք, թե հանրահայտ ձեռքբերումներ ունեցած և նորեյան մրցանակների արժանացած գիտնականները դրա դիմաց հարկեր չէ՞ն վճարում... Այն էլ ոնց են վճարում. յուրաքանչյուր դրամական պարգև համապատասխան հարկեր է պահանջում: Թե քանի տոկոս է վճարվում պետությանը, չի հրապարակվում՝ դա յուրահատուկ գլուխկոտրուկ է: Միայն այն ղեպքերում են բացառություններ արվում, երբ դափնեկիրն իր պարգևը բարեգործությանն է ուղղում /դա հասկանալի է, քանի որ, փաստորեն, գրեթե ոչինչ չի մնում/ կամ պետության մատնանշած կրթօջախին:

## ՏՂԱՄԱՐԴԻԿ՝

### ՇԵՂՈՒԹՅՈՒՆ

**Փ** աստորեն՝ այդ այդպես էին կարծում 17-րդ դարում՝ Անգլիայում: Այդտեղ արական սեռի սպասավորները դիտվում էին որպես շքեղության առարկա, նրանց տերերն էլ՝ բյուջեն լցնելու լավագույն աղբյուր:

## ՇԱՏ «ԱՂԻ» ԶԱՐԿԵՐ

**Ա**ռաջին հայացքից թվում է, թե արտասովոր ոչինչ չկա, ի՞նչ է եղել որ՝ աղի հարկ: Բայց արի ու տես, որ հենց այս հարկատեսակի պատճառով է փլուզվել Չինական կայսրությունը, աղի հարկը արագացրել է ֆրանսիական հեղափոխությունը: Անգամ Մահաթմա Գանդին է մասնակցել կազմակերպված բողոքի ակցիաներին, որպեսզի այդ հարկը չկիրառվի Զնդկաստանում: Այստեղ չենք կարող չնշել, որ Անգլիայի սահմանած հարկի չափը Զնդկաստանում ապրանքի արժեքի 4 հազար տոկոսն էր...



»»» «Արցախում ժողովրդագրական «պայթում» պետք է տեղի ունենա: Բնակչության թիվը պետք է հասնի 300 հազարի, և այդ գործում նաև մենք՝ գործարարներս, պետք է օգնենք երիտասարդ ընտանիքներին՝ սոցիալական տարբեր ծրագրեր իրագործելով»:

»»» «Յամաշխարհային տնտեսությունից դեռևս երկար ժամանակ կպահանջվի ամբողջական և լիովին վերականգնվելու համար, սակայն ճգնաժամի ամենավատ փուլն արդեն կարելի է հաղթահարված համարել: Տնտեսական ցնցումներից հետո համաշխարհային շուկայում դրական միտումներ եմ նկատում»:

»»» «Նավթի և գազի փոխարեն հայերին, որպես պարզև, փոխանցվել է

գենետիկ ներուժը: Յայրենիքի սահմաններից դուրս գտնվող յուրաքանչյուր հայ պարտավոր է գենետիկ հարկ վճարել հայ ժողովրդին: Յենց այդ՝ սերնդեսերունդ փոխանցվող գենետիկ ներուժն է ցանկացած հայի սկզբնական կապիտալը, որը հետագայում ապահովում է նրա հաջողությունը»

»»» «Մարդկանց պետք է օգնել, բայց եթե օգնությունն անարդյունք է լինում, ապա վերածվում է ողորմության: Իսկ դա մարդուն դարձնում է հոգով աղքատ: Պետք չէ այդպես վարվել մարդկանց հետ, հատկապես, եթե նրանք հզոր ներուժով են օժտված: Ուղղակի նրանց հնարավորություն տվեք, մնացածը նա ինքնուրույն կանի: Օգնեք մարդկանց պարզապես ուղի հարթել, ոչ թե ճանապարհն անցնել նրանց փոխարեն»:



**Լևոն Յայրապետյան**

Գործարար, բարերար

## ՄԳԿՐՈՂՄԻ

## ԿԵՏԱԿԵՄ



**Արթուր Ակրտումյան**

«Բեյզ Մեթըլս» ՓԲԸ գլխավոր տնօրեն

»»» «Լինել թիվ մեկ հարկատու... Դա մեծ պատասխանատվություն է, առավել ևս, երբ խոսքը Ղարաբաղում գործող ընկերության մասին է: Մենք գիտակցում ենք, որ ընկերության գործունեությունը կարևորվում է ոչ միայն աշխատակիցների և բաժնետերերի, այլև՝ հասարակության և հատկապես՝ սոցիալական որոշակի ուղղվածություն ունեցող շերտերի համար: Բնականաբար, այս գործուները մեզ համար է՛լ ավելի են կարևորվում, երբ դիտարկվում են ղարաբաղյան տնտեսության ու հասարակության բա-

րեկեցության տեսանկյունից»:

»»» «Միայն այն փաստը, որ «Բեյզ Մեթըլս»-ը ևս այս կամ այն չափով իր մասնակցությունն է ունենում մեր Արցախի տնտեսության զարգացման գործում, արդեն իսկ ոգևորող է: Մենք հրաշալի գիտակցում ենք, որ մեր կողմից վճարվող հարկերը Ղարաբաղի պետություն են գնում, որ այդ գումարներն ուղղվում են բնակչության համար կարևոր խնդիրների լուծմանը... Մեզ համար դա է առաջնային»:

**ԹԵԺ ԳԻԾ**

**Վստահություն**

**Հրատապություն**

**Հետևողականություն**

**(+374 47) 948-620**

# Կանխավճարային քարտեր



Ղարաբաղ ՏԵԼԵԿՈՄԻԿ